№ 9 (129) XII ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԱԼՈՒԹԻՒՆ

1894-1896 թուերին՝ տաճկական գազանութիւնների ժամանակ իր դժբախտ հայրենիքից փախուստ տուած հայը, հանգիստ ու դադար չէ գտնում և ոչ մի տեղ: Դրանց մեծագոյն մասը՝ թուով 40-50 հազար, դիմեց դէպի Կովկաս, կարծելով որ իրեն կ'օգնէ եղբայրակից հայը, որ իրեն կը հովանաւորէ „քրիստոնեայ" ռուս կառավարութիւնը:

Բայց այդ յոյսերը չարդարացան: Նրան օգնութեան ձեռք կարկառեց միայն իր նման ագքատ ու անկար Կովկասի հայ գիւղացին: Թշառութեան ծովի դիմաց լուռ մնացին և՛ մեր ապահով դասակարգերը: Արևելքի „քրիստոնեաների պաշտպան" ռուս կառավարութիւնը խորթ մայր հանդիսացաւ դէպի ինքը ապաւինող հայ փախստականները: Փոխանակ Կովկասի ալ և այլ անկիւններում նրանց տեղաւորելու, ինչպէս դա արել է ուրիշ գաղթականութիւնների վերաբերմամբ նոյնանման դէպքերում, կամ պահանջելու օսմանեան կառավարութիւնից, որ նա յետ ընդունէ իր հպատակներին, ռուս կառավարութիւնը դիմեց բոլորովին այլ ճանապարհի:

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին հրատարակեց, Նիկոլայ Բ. կայսեր ստորագրութեամբ վաւերացրած, մի կարգադրութիւն, որ վերաբերում է հայ փախստականներին: Այդ կարգադրութեամբ՝ Թիւրքիայից 1896 թուից յետոյ փախած բոլոր հայերը կամ պէտք է ընդունեն որոշ ժամանակամիջոցում ռուսահպատակութիւն, կամ պէտք է վերադառնան Թիւրքիա: Հպատակութիւն ընդունողները „իրաւունք" են ստանում գրաւել Կովկասի այլ և այլ քաղաքների „մեշչանների" շարքում, վճարել բոլոր տուրքերը, ենթարկուել զինուորագրութեան բոլոր կանոններին և միևնոյն ժամանակ ոչ միայն հող չեն ստանում աշխատելու համար, այլև 20 տարուայ ընթացքում զրկւում են քաղաքներից դուրս անշարժ գոյքեր գնելու իրաւունքից:

Ամիսների ընթացքում հայ գաղթականը մնացել էր շարած, չգիտէր ինչ անէր: Կովկասում նրան սպասում էր թէև գուցէ ապահով կեանք, բայց անպատաբեր ապրուստ: Հազարաւոր տարիներ հող մշակող հային բռնի կերպով ուզում են դարձնել „մեշչաններ", անտուն անտէր պրոլէտէրներ: Գուլթանի մաճը բռնելու տեղ նրան առաջարկում են քաղաքի փողոցները աւլել, հարուստների ագարակներում ու գործարաններում կէս գնով աշխատել:

Անցնել միւս կողմը՝ հայրենիք, թալան-թուրանի աշխարհը — նշանակում էր ենթարկուել անխուսափելի վտանգի, անորոշութեան սարսափին: Սակայն այնտեղ են նրա քոյրն ու զաւակը, այնտեղ են հայրենի տան փլատակները, սիրած դաշտերը, պապերի գերեզմանները:

Շարած մնացած էր հայ փախստականը, բայց եկաւ վճռական րոպէն և նա շարժուեց: Մեծամասնութիւնը որոշեց վերադառնալ և ապրել իր դժբախտ, բայց մայրհողի վրայ: Նրանք ճամբայ ելան իրենց ցնցոտիների մէջ, մեծ մասը ոտով, դառն քրտինքով աշխատած կոպէկները գրպաններում: Ռուս պաշտօնեաները չտուեցին գաղթականներին՝ նրանց անուանով մի քանի տարի առաջ հանգանակուած 45 հազար ռուբլին, և նոյնիսկ արգելեցին նոր հանգանակութիւն կատարել յօգուտ հայրենիք վերադարձող փախստականների: Եւ այսօր եօթ հազար հոգի՝ տղամարդ, երեխայ, կին կանգնած են ռուս-թիւրքական սահմանի վրայ:

Այդ ողբերգական պայմաններում Կ. Պոլսի հայոց պատրիարքը պատասխան չի տալիս իրեն ուղղուած հեռագիրներին. իսկ օսմանեան կառավարութիւնը թոյլ չի տալիս անցնել սահմանը:

Իշխան Գոլիցինի էինովիկները շտապեցնում են նրանց՝ իբր թէ „հոգ տանելով" տեղացի հայ ազգաբնակութեան մասին, որը եղբայրաբար բացել է իր դռները „փախստականների" առջև: Գաղթականները մնացել են երկու կրակի մէջ: Նկատւում են վհատութեան նշաններ: Շատանում է ռուսահպատակութիւն ընդունողների թիւը, խօսում են նոյնիսկ մահմէտականութիւն ընդունելու մասին...

Ցանուն մարդկայնութեան գաղթականները վերջերս դիմել են Ռուսաց, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարութիւններին մի խնդրագրով (որը տպագրում ենք „Դրօշակի" այս համարում)՝ միջնորդել օսմանեան պետութեան առաջ, որպէս զի իրենց միջոց տրւի մտնել հայրենի երկիրը, մշակել իրենց դաշտն ու անդաստանը:

Ինչ հետևանք կ'ունենայ այս աղերսագիրը՝ ցոյց կը տայ ապագան, բայց գաղթականների տխուր դրութիւնը ակամայ ստիպում է մեզ մի ակնարկ ձգել մի այլ աւելի

տխուր և աւելի զաղջելի երևոյթի վրայ։ Մեր խօսքը այն պատմական դաւաճանութեան մասին է, որը վերջին տարիների ընթացքում ռուս կառավարութիւնը ցոյց է տալիս դէպի հայ ժողովուրդը։

—

Հայերի և ռուսների յարաբերութիւնները քաղաքական նպատակով սկսել են շատ վաղուց։ Շատ վաղուց է, որ օսմանեան պետութեան սահմանակից և հակառակորդ Ռուսաստանը իրեն նեցուկ էր փնտրում մահմէտականութեան ծոցում ապրող քրիստոնեաներին։ Շատ վաղուց է, որ մահմէտական վայրենի ցեղերով շրջապատուած հողագործ-քրիստոնեայ հայերը աչք էին դարձրել դէպի ամենամօտ քրիստոնեայ ռուս պետութիւնը։ Բնականաբար, երկու ազգերը սկսեցին զգալ դէպի միմեանց փոխադարձ համակրութիւն. երկու ազգերի մէջ կապուեց լռելեայն համաձայնութիւն, որը երկար ու ձիգ տարիների ընթացքում ունեցաւ իր խոշոր հետևանքները։

Պետրոս Մեծի Կասպեան արշաւանքից սկսած՝ Ռուսաստանի կողմից մղուած բոլոր պատերազմների ժամանակ հայերը ամէն կերպ օգնում, նպաստում էին ռուսներին թէ պաշարով, թէ զէնքով։

Բոլոր պատերազմների վերջանալուց յետոյ մահմէտականները վրէժ էին լուծում իրենց հպատակ „գեաւուրներից“, բոլոր պատերազմները իբրև հետևանք առաջ էին բերում հազարաւոր հայերի գաղթելը դէպի „բարեկամ“ քրիստոնեայ Ռուսաստանի սահմանները։

Այդպէս եղաւ և՛ Պետրոս Մեծի ժամանակ, երբ հաստատուեցին Մոզտոկ, Ղզլար և Հիւս. Կովկասի միւս հայ գաղութները, և՛ Եկատերինա Բ.-ի ժամանակ, երբ Ղրիմի հայերը բնակեցին Դօնի ափերում, իսկ Վլադիմիրինը՝ Դնեստրի վրայ. նոյնն էր և 1827-29 թ. ռուս-պարսկական և ռուս-տաճկական, ինչպէս և 1853-56 թ. Ղրիմի պատերազմների ժամանակ, երբ Մաքուայ խանութեան մէջ ապրող հայերը գաղթեցին դէպի Արարատեան դաշտը, իսկ Էրզրումի, Ալաշկերտի հայ ազգաբնակութեան սուար մասը դիմեց դէպի Ալէքսանդրապոլ, Ախալքալաք, Գոկչա։ Թափելով արիւն, թողնելով տուն ու տեղ և դիմելով գաղթականութեան՝ հայ գիւղացին ձեռք էր բերում ապահով կեանք, իր աշխատանքի համար անհրաժեշտ հող, կրօնի ազատութիւն և ազգայնութեան պահպանութեան հետ միասին, որոշ քաղաքացիական իրաւունքներ։ Ռուս կառավարութիւնը իր կողմից օգտւում էր հայերի ցոյց տուած աջակցութիւնից և արագ կերպով առաջ էր խաղում դէպի արևելք, ձեռք էր բերում ընդարձակ երկիրներ և հայերի նման խաղաղ, աշխատասէր, հաւատարիմ և կուլտուրապէս ընդունակ հպատակներ։ Երկու կողմերն էլ գոհ էին այս դրութիւնից, երկու կողմերն էլ հասկանում և կատարում էին իրենց պատմական պարտականութիւնը։ Դաշինք, գրաւոր պայման չկար մէջտեղ, բայց այդ լռելեայն պայմանը գոյութիւն ունէր հայ-ռուսական յարաբերութեան մէջ, սրբագործուած հաղարաւոր հայ և ռուս կուսակների թափած արիւնով։ Դա մի մեծ պայման էր, որ բղխում էր երկու ազգերի պատմական դերից արևելքում, որ հասկանում, զգում էին դաշնակիցների հետ միասին և նրանց թշնամիները։

Բայց... մեր պատմական դաշնակիցները մեզ դաւաճանեցին։ Դաւաճանութիւնը թէև սկսուած էր դեռ ևս Ներսէս V-ի օրերից, երբ, չնայած տրուած խոստումներին, „Հայկական հողերը“ չստացան ոչ մի արտօնութիւն— բայց նա իր իսկական գոյնը ցոյց տուեց միայն վերջերս։

1877-78 թ-ի պատերազմից յետոյ, երբ հարց ծագեց Ալաշկերտից փախած գաղթականների տեղաւորելու մասին, գեներալ Գրանկինիի առաջարկութեամբ և իշխան Միրսկու հաւանութեամբ, որոշուեց՝ „ռուսահպատակ հայերին տաճկահպատակ հայերից բաժանելու նպատակով“ չբնակեցնել նոր գաղթականներին Կարսի շրջանում և առհասարակ այդ նահանգում հող չտալ հայերին։ Գաղթականները բաժանուեցին Երևանի նահանգի այլ և այլ, առանց այն էլ հողի պակասութիւն ունեցող, հայ գիւղերում, իսկ Թիւրքիայից նոր նուաճուած ընդարձակ հողերը յատկացուեցին ռուսներին և յոյներին։

Դրանից յետոյ տարէց տարի միմեանց յաջորդեցին մի շարք բոլորին յայտնի խստութիւններ հայերի վերաբերմամբ. հայ ծխական դպրոցների փակումը, հայերին պետական պաշտօնների մէջ չ'ընդունելը, ռուս գաղութներ հաստատելը գլխաւորապէս հայաբնակ շրջաններում, հայ բանւորների չ'ընդունելը պետական երկաթուղիների և այլ ձեռնարկութիւնների մէջ, կրօնափոխութեան քարոզը, որ առաջ է մղում հայ գիւղացու համար նւիրական „հողը“ տալու խոստումներով, Ռուսաստանի թշնամութիւնը Տաճկահայաստանում բարենորոգումներ մտցնելու վերաբերմամբ և այլն և այլն։

Այս ամէնը բացատրւում էր այլ և այլ քօղարկուած պատճառաբանութիւններով, բայց իրօք մի նպատակ ունէր՝ իրագործել այն ծրագիրը, որ առաջարկում և պահանջում են ռուս թեթու և կարճատես ազգասէրները, այսինքն, նիւթապէս և բարոյապէս թուլացնել Ռուսաստանի բոլոր ծայրերը, բոլոր ոչ-ռուս ազգերը, նրանց վրայ իշխելու, նրանց ճուլելու դիտաւորութեամբ։ Ներկայումս ռուս կառավարութեան դէպի հայ գաղթականները ցոյց տուած անվայել դիրքը այնքան ակնայայտ կերպով է պարզում այդ նպատակը, որ ոչ ոք այլևս չի կարող կասկածել դրա մասին։ Եւ իսկապէս ինչո՞վ բացատրել իշխան Գոլիցինի վերաբերմունքը դէպի հայ գաղթականները։

Անշուշտ, „տանից-տեղից զուրկ“, „թափառաշրջիկ“ մի քանի տասնեակ հազար աշխատաւորների հասարակական „ոչ յուսալի դիրքը“ չէր, որ ստիպում էր ռուս պաշտօնեաներին դիմել այսօրւայ բռնած ընթացքին։ Ամէն տարի, միլիոնաւոր ոտաբոբիկ քաղցած ռուսներ թափառում են „ուղղափառ“ պետութեան ամբողջ տարածութեան վրայ, լցնում են քաղաքների հրապարակները և ժամանակ առ ժամանակ առաջացնում այն-

պիսի կռիւներ, կողոպուտներ և սպանութիւններ, որ շատ քիչ երկրներում են պատահում։ Պարսկաստանը հարիւր հազարաւոր բանւորներ է մատակարարում ներկայումս ոչ միայն Կովկասի քաղաքներին ու գիւղերին, այլև հարաւային Ռուսաստանի նաւահանգիստներին ու գործարաններին։ Ռուս կառավարութիւնը դրա դէմ ոչինչ չունի և ինչու ունենայ, քանի որ չնչին վարձով պարսիկները նորանոր միլիոններ են աւելացնում գործարանատէրերի և հողատէրերի հարստութեան վրայ։

Միթէ 40 հազար հողագործ ճնշուած հայ գաղթականները աւելի „վտանգաւոր“ է՞ին Կովկասի „խաղաղ կեանքի“ համար, քան միլիոնաւոր թափառական ռուս աշխատաւորները և անլեզու պարսիկ կուլիները։

Ի՞հարկէ ոչ։

Անհաւատալի է և այն, որ Պոլսի ռուսաց դեսպանը անկարող եղաւ Բարձր Դռան առաջ պնդել, որ թոյլ տրւի վերադառնալու իրենց ընտանիքների մօտ այն „փախըստականներին“, որոնցից տաճիկ կառավարութիւնը եօթը տարւայ ընթացքում կանոնաւոր կերպով ստացել է բոլոր հարկերն ու տուրքերը։ Եթէ ռուս կառավարութիւնը կարողանում է՝ հակառակ դաշնագրութիւնների՝ ջրանցքներով անցկացնել իր մարտանաւերը. եթէ հակառակ տեղացի ալբանացիների կամքին՝ տաճկաց զօրքի ուժով դեսպան Զինովիևը ուզում է հաստատել իր հիւպատոսին Ալբանիայում, միթէ կարելի՞ է հաւատալ, որ նա անկարող եղաւ իրագործել տալ իր օրինական պահանջը գաղթականների վերաբերմամբ։

Եթէ ընդունենք անգամ, որ ռուսաց կառավարութիւնը իսկապէս չէր կարող գաղթականներին վերադարձնել տալ Տաճկաստան և նա շատ խորշում „թափառական տարրից“, միթէ դժուա՞ր էր թափառական թաթարների — որոնք ամէն տարի հազարներով գաղթում են Թիւրքիա — ազատ հողերի վրայ բնակեցնել փախստական, բայց հողագործ հայերին և, էպիսով առաջ բերել և՛ „խաղաղութիւն“ և՛ կիսով չափ լուծել հայոց հարցը։

Ակներև չէ՞ արդեօք, որ գաղթականների „անյուսալի“ լինելը միայն պատրւակ է Գօլիցիններին համար։

Երբ հարկաւոր է ճնշել հայ „քաղաքացիներին“, չինովնիկները արդարանում են նրանով, որ քաղաքացի հայ „բուրժուազիան“ ճնշում է վրացի ազնուականներին, „հողագործ“ աշխատասէր գիւղացիներին։

Երբ 40 հազար հողագործ, հալածական հայ „գիւղացիներ“ ուզում են իրենց յատուկ արհեստով պարապել, հալալ քրտինքով աշխատել իրենց հացը, վարելով խաղաղ կեանք—նրանց ստիպում են դառնալ քաղաքացի, լցնել թափառական պրոլետարների շարքերը. . .

Այս բոլոր քօղարկուած, նենգ պատճառաբանութիւնների իսկական, նախամտածուած միակ նպատակն է—ոչնչացնել հայերին կամ ձուլել նրանց սլավօ-թաթար զանգուածից կազմուած ռուս ցեղի հետ։

—

Բարեբախտաբար ժամանակները փոխւում են. . . Իրենց գործ դրած բռնի ու ապօրինի միջոցներով ռուս կառավարիչները չեն հասնի ցանկացած նպատակներին։

Ինչպէս բոլոր ազգերի, այնպէս էլ հայերի ամենամեծ ուժն ու հարստութիւնը ինքը հայ ժողովուրդն է՝ նրա աշխատասիրութիւնը, նրա մտաւոր և բարոյական բարձրութիւնը, նրա տոկունութեան ու դիմացկանութեան աստիճանը։

Իր ներքին ռուսացման քաղաքականութեան մէջ ռուս պաշտօնեաները կը հանդիպեն հայ ժողովրդի հոգեկան բարձրութեանն ու դիմացկանութեանը. դրսում ռուս դիպլօմատները կ՚ընդհարւին աւելի կրթւած, աւելի ազատասէր և աւելի ուժեղ ազգերի հետ։

Զուրկ զարգացման ազատ պայմաններից հայերը հաւանական է չտան այլ ևս փայլուն զօրապետներ, յայտնի գիտնականներ ու հասարակական գործիչներ։ Անվերջ, սիստէմատիկ ճնշումների տակ հայ ժողովրդի մի մասը գուցէ վհատւի հոգեպէս և ընկնի բարոյապէս, բայց, այնուամենայնիւ, հայ մասսան կը պահպանէ իր ազգային առանձնայատկութիւնները, կ՚առաջադիմէ և կը մնայ— ինչպէս և առաջ — քաղաքակրթութեան աւանգարտը առաջաւոր Ասիայում։

Մեծ է Աստուածը հայ ազգի!

Սակաւահող հայ գիւղացին այս ու այն տեղ գուցէ դառնայ շատ հող ունեցող ռուսի հովիւն ու ծառան, բայց, ընդհանրապէս, հողի քանակի պակասը լրացնելու համար նա կը դիմէ աշխատանքի որակի բարձրացնելուն, կը պարապի աւելի ջանք ու համառութիւն պահանջող ճիւղերով։

Ազգերի հարստութեան հիմքը աշխատանքն է և ոչ հողի քանակութիւնը։ Հողով հարուստ, բայց աշխատանքով ցած Ռուսաստանը մնացել է աղքատ, իսկ աշխատանքով բարձր և հողով սակաւ Եւրոպան տնտեսապէս Ռուսաստանի տէրն է այսօր։

Զլինելով տէրութեան ծառայութեան մէջ, հայ ինտելիգենտը կըզբաղւի թէև ոչ այնքան „փայլուն“, բայց աւելի հաստատ, աւելի ապնիւ և աւելի մաքուր մասնաւոր պարապմունքով։ Երկաթուղում 80 կոպէկ ստանալու տեղ, հայ բանւորը մի այլ տեղ կ՚աշխատէ 70 կոպէկ և սովից չի մեռնի։ Նեխւած, ամէն նախաձեռնութիւն մեռցնող չինովնիկական շրջանից հեռու մնալով, հայերը կը լարեն իրենց անհատական ընդունակութիւնները, աւելի կենսունակ կը հանդիսանան կեանքի կռւի ասպարիզում, աւելի կ՚օգտւին մարդկութեան հետ ունեցած լայն շփումից։

Տեսնելով բռնաբարւած մայրենի լեզուն, անվերջ հալածանքներ դէպի իր ծնողները, պետական դպրոցում ուսանող, նոյնիսկ ռուսախօս հայ մանուկը աւելի կը սիրէ իր տառապեալ ազգը, աւելի կը զզւի նրա հալածողներից։

Գոյութակցութեամբ ռուսադաւանութիւն ընդունող հայ գիւղացին, ճնշման տակ կատարւած իր այս „դա-

ւաճանութեան“ մեղքը կը քաւէ՝ սրտի խորքում աւելի սիրելով իր եղբայրակիցներին, աւելի ատելով իրեն փողով „փրկողներին“։

Գաղթականների անունով ժողովուած 45 հազար ռուբլով ռուսաց դանձարանը չի հարստանայ. իշխան Գոլիցինի առաջարկութեամբ հայ բարեգործական հիմնարկութիւններին արուած կարգադրութիւնը՝ չնպաստել հայ երեխաների կրթութեան, ինչպէս և չ՝անել հանգանակութիւն յօգուտ աղքատ գաղթականների — չեն հասնի իրենց նպատակին։ Հայ ծնողները կրթութիւն կըտան երեխաներին իրենց վերջին կօպէկներով, հայ հարուստները կը կրկնապատկեն իրենց առատաձեռնութիւնը, երիտասարդութիւնը խաւարի մէջ չթողնելու համար։ Իսկ աղքատ, հիւանդ գաղթական կանանց ու երեխաներին կ՝օգնէ աղքատ հայ գեղջուկը։

Հայրենիք վերադարձող հայերը կը հաստատուին հայրենի փլատակների վրայ և կը վառեն իրենց օջախների մարած կրակը. անճարութիւնից ռուսահպատակութիւն ընդունողները կը ցրուին հայ գիւղերում, կը հաստատուին հայաբնակ քաղաքներում և իրենց տոկուն ու ակնիւ աշխատանքով կը դիմադրեն ռուս չինովնիկների ցանկութեանը՝ բարոյապէս ոչնչացնել հայերին։

Մեծ է Աստուածն Արդարութեան!

Ինչպէս անցեալում Լօբանով Ռոստովսկին 200 հազար հայ արիւնով ուզեց գերիշխանութիւն առաջ բերել Թիւրքիայի վրայ, բայց անսպասելի կերպով իր առջև տեսաւ մի նոր հզօր թշնամի՝ Գերմանիան, այդպէս էլ կը լինի ապագայում։ Այսօր Գերմանիան, վաղը Ամերիկան, միւս օր միացած առաջադէմ պետութիւնները կը դիմադրեն ռուսաց նուաճողական ձգտումներին։

Քաղաքակիրթ աշխարհի արդիւնաբերական, առաջադիմական, մարդկայնութեան շահերը աւելի մեծ և աւելի հզօր են, քան ռուս դիպլոմատիայի նուաճման, կլանման, մարդակեր ուղղութիւնը։ Այսօր թէ վաղը յետադէմ միապետական Ռուսաստանը խոնարհւելու է քաղաքակիրթ ռամկավար Արևմուտքի առաջ, հպատակւելու է նրա հրամանին՝ չդիպչել ոչ մի ազգի կեանքի, աշխատանքի և առաջադիմութեան իրաւունքին։

Այդ օրը կը գայ։ Մենք ուժ կունենանք նրան սպասելու։

Մեծ է Աստուածը Հայ ազգի!

Մեծ է Աստուածն Արդարութեան!

Քսանուհինգ դար է ինչ պատմական գոյութիւն ունի Հայ ժողովուրդը. այդ 25 դարերի ընթացքում նա տեսաւ շատ բռնութիւններ, ենթարկւեց անվերջ չարչարանքների՝ աւելի ծանր, աւելի վայրենի։ Տեսաւ այդ բոլորը, ապրեց և իր գոյութիւնը պահպանեց հայրենի հողի վրայ։

Նոյնը կը լինի և այժմ։ Բոլորը կ՝անցնի։

Հայ գաղթականների ստացած ֆիզիքական և բարոյական վէրքերը կը բուժուին, կը մոռացուին հայերի կրած դառն օրերը։

Չի մոռացուի միայն ռուս բիւրօկրատիայի այսօրուայ անմարդավայել, կանիբալական վարմունքը, չի մոռացուի Ռուսաստանի ցոյց տուած այս մեծ պատմական դաւաճանութիւնը։

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Եւրոպական մի քանի լրագիրներ արդէն հրատարակեցին այն խնդիրքը, որ ուղղուած է ռուս-տաճկական սահմանի վրայ ժողովուած գաղթականների կողմից Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրներին։ Ահա այդ խնդիրքը.

A son Excellence M. le Ministre des Affaires étrangères de la République française :

EXCELLENCE,

Nous, les Arméniens de la Turquie, sujets ottomans, forcés d'émigrer lors des grands massacres des Arméniens en 1894-1896 et réfugiés sur le sol hospitalier de la Russie, au nombre de 40 à 50.000 âmes, venons implorer par la présente requête le gouvernement de la grande Nation Française, comme nous avons déja imploré le gouvernement de Sa Majesté l'Empereur de toutes les Russies, de vouloir bien nous porter aide et protection dans l'état affreux et insupportable, où nous nous trouvons actuellement.

Nous ne sommes pas des criminels, nous n'avons commis aucun crime, mais nous étions obligés de quitter notre pays natal poussés seulement par la misère et par la crainte des massacres.

Pendant sept années, la Russie nous a accordé hospitalité et asile, en nous procurant la possibilité de gagner notre vie et celle de nos familles laissées en Turquie. Notre reconnaissance envers Sa Majesté l'Empereur Nicolas II et la Maison russe est sans bornes. Par le produit de notre travail nous n'avons pas manqué de payer au gouverne-

Նորին Պայծառափայլութեան Ֆրանսիական Հանրապետութեան Արտաքին Գործերի Մինիստրին

Ձերդ պայծառափայլութիւն,

Մենք, Թիւրքիայի հայերս, օսմանեան հպատակ, ստիպուած լինելով գաղթել 1894-96 թ. մեծ կոտորածների ժամանակ եւ ապաստանել Ռուսաստանի հիւրընկալ հողի վրայ, թւով 40-50,000 հոգի, ներկայ խնդրագրով աղերսում ենք Ֆրանսիական Մեծ Ազգի կառավարութեանը, ինչպէս աղերսած ենք արդէն Ն. Մ. ամենայն ռուսաց Կայսեր կառավարութիւնից, բարեհաճել օգնելու ու հովանաւորելու մեզ մեր ներկայ տխուր եւ անտանելի դրութեան մէջ։

Մենք ոճրագործներ չենք. մենք ոչ մի յանցանք չենք գործել, բայց ստիպուած էինք թողնել մեր ծննդավայրը մղուած միմիայն թշուառութիւնից եւ կոտորածների երկիւղից։

Եօթը տարուայ ընթացքում՝ Ռուսաստանը հիւրընկալեց եւ ապաստանեց մեզ, հնարաւորութիւն տալով աշխատել եւ կերակրել Տաճկաստանում թողած մեր ընտանիքներին։ Մեր երախտագիտութիւնը դէպի Ն. Մ. կայսր Նիկոլայ Բ. եւ նրա Տունը անսահման է։ Մեր աշխատանքի արդիւնքով մենք վճարել ենք օսմանեան պետութեան բոլոր այն տուրքերն ու հարկերը, որոնք ծանրացած են եղել մեր ընտանիքների վրայ մեր բացակայութեան միջոցին։

ment ottoman tous les impôts et toutes les contributions, dont nos familles ont été chargées pendant notre absence.

Cependant le temps est arrivé de rentrer dans notre pays natal, puisque nous ne pouvons pas profiter de la proposition magnanime du gouvernement russe d'accepter la sujétion russe par la raison que nos familles restées en Turquie n'ont pas la possibilité de nous rejoindre en Russie. Et quittant les villes et villages russes, où nous étions réfugiés, nous nous sommes groupés sur la frontière russo-turque, mais le gouvernement ottoman, qui tout le temps pendant sept années, nous a reconnu comme ses sujets et nous a fait payer tous les impôts, refuse de nous laisser rentrer sur le sol natal. L'hiver s'approche et notre situation devient des plus déplorables.

Par conséquent, nous sommes obligés de recourir à la protection de la République française et implorer le gouvernement français, au nom de l'humanité de vouloir bien intercéder en notre faveur auprès du gouvernement ottoman pour nous laisser rentrer sur le sol natal, chez nos familles et laisser labourer nos champs et terres.

Les représentants et délégués des Arméniens ottomans réfugiés en Russie et groupés sur la frontière russo-turque.

Le 10/23 septembre 1902,
frontière russo-turque.

(Suivent les signatures).

Սակայն, հայրենիք վերադառնալու ժամանակը հասել է, որովհետեւ մենք անկարող ենք օգտուիլ ռուսաց կառավարութեան վեհանձն առաջարկից՝ ընդունել ռուսահպատակութիւն, քանի որ Տաճկաստանում մնացած մեր ընտանիքները հնարաւորութիւն չունին Ռուսաստան գալ եւ միանալ մեզ հետ։ Թողնելով Ռուսաստանի քաղաքները ու գիւղերը, ուր ապաստանած էինք, մենք ժողովուած ենք այժմ ռուս-տաճկական սահմանի վրայ. բայց օսմանեան կառավարութիւնը մերժում է մեզ ընդունել, չնայած որ եօթը տարւայ ընթացքում նա ճանաչած է եղել մեզ իբրեւ իր հպատակներ եւ հարկադրած է վճարել բոլոր տուրքերը։ Ձմեռը մօտենում է եւ մեր վիճակը աւելի եւս ողբալի է դառնում։

Ուստի, մենք ստիպուած ենք՝ դիմել Ֆրանսիական հանրապետութեան հովանաւորութեանը եւ յանուն մարդկայնութեան աղերսել Ֆրանսական կառավարութիւնից բարեհաճել միջամտելու մեզ համար տաճիկ կառավարութեան հանդէպ, որպէս զի նա թոյլ տայ մեզ վերադառնալ մեր հայրենի երկիրը, մեր ընտանիքների մօտ, թոյլ տայ մեզ մշակել մեր հողերն ու դաշտերը։

Ներկայացուցիչներ ու պատգամաւորներ Թիւրքահպատակ հայերի՝ ապաստանած Ռուսաստան եւ խմբւած ռուս-Թիւրքական Սահմանի վրայ՝

10 | 23 սեպտ. 1902
Ռուս-տաճկական սահման

(Ստորագրութիւններ)

ՀԱՅԴՈՒԿԻ ՆՇԱՆԱԾԻ ԵՐԳԸ

Հայաստանից եկած զինւոր,
Սիրական, կեանքիս հատոր,
Քեզ կըսպասէի օրէ ցոր,
Շողշողուն զէնքերիդ մատաղ։

Արկածալիր կեանք-խորհրդով,
Լեռներ ես անցեր շտապով,
Արեգակն է այրել տապով,
Սեւորակ պատկերիդ մատաղ։

Կը գաս զոհերի երկրէն,
Պատմէ Մոկունքցի Եսթերէն,
Խօսիր Գիսակի խօսքերէն,
Սրտաշարժ խօսքերուդ մատաղ։

Ձով Սասունի հովէն կուգաս,
Վանայ ծփան ծովէն կուգաս,
Անդրանիկի քովէն կուգաս,
Սար-ձոր ընկած գլխիդ մատաղ։

Սերոբ փաշի գերեզման
Տեսել ես, իմ սիրական,
Դիտել ես ողջ Հայաստան,
Էգուցւայ ճամբիդ մատաղ։

Հայաստանից եկած զինւոր,
Սիրական, կեանքիս հատոր,
Քեզ կըսպասէի օրէ ցոր,
Ապագայ յոյսերուդ մատաղ։

(„ՖԸԴԱՅԻՆԵՐԻ ՊԱՏՄԱՌԱՆԻՑ")

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ԻՒՉ-ՔԻԼԻՍԷԷՆ

15 յուլիս 1902

Երրորդ տարին է որ մշտական ու սովորական միաբանութենէն զուրս, անկոչ ու տարբեր միաբանութիւն մը գրաւած է մեր վանքը, որ զբաղւած է միմիայն ուտելով, խմելով ու իր ցանկացած քէյֆը սարքելով...

Իւչ-քիլիսէի, կամ սուրբ Օհաննու վանքն ունի իր վանահայրը, որ կ'ուղարկւի պատրիարքի կողմէն. վանահայրը միանգամայն Առաջնորդ է Ալաշկերտի ու Բայազէտի գաւառներու, որու կեդրոնատեղին է Ալաշկերտի Գարա-քիլիսէն։

Երեք տարւայ ընթացքին մէջ, առաջնորդ և վանահայր Մամբրէ վարդապետը չի բարեհաճեցաւ ոչ մէկ օր գալ վանք հետաքրքրուիլ՝ թէ ինչե՞ր կը կատարուին այստեղ, ի՞նչ կ'ընէ Օրման փաշայի Նոր միաբանութիւնը...

Այդ Նոր միաբանութիւնը բաղկացած է 40-է աւելի տաճիկ կանոնաւոր զօրքերէ, որոնք կը կառավարուին հարիւրապետով ու յիսնապետով մը։ Հարիւրապետը շատ քիչ անգամ ներկայ կ'ըլլայ. յիսնապետ Իբրահիմ էֆ. միշտ պատրաստ է ու կը կառավարէ թէ զօրքը և թէ վանքը։

Յիսնապետ Իբրահիմ էֆ. հայատեաց ու ամենակեղտոտ մէկը ըլլալով, թէ ինքզինքին և թէ ամբողջ զօրքին թոյլ կուտայ ուզածնին ընելու. ամէնքն ալ կ'օգտուին վանքէն, առանց փարա մը վճարելու անկողնի, ուտելիքի, վառելիքի, կահ-կարասիքի համար։ Վանքի սենեակներէն 3-ը յատկացուցած են իրենց բնակութեանը, մէկը փուռ են շինած, միւսը ամբար ու այսպէս պէտք եղած յարմարութիւններ ստեղծած են իրենց հանգստութեան համար։

Միաբան-յիսնապետը ու իր հետևորդները ազատ են ամէն տեղ մտնելու, գործելու ու յանդիմանելու. եկեղեցու դուռը բաց է միշտ անոնց առջև. մինչև իսկ պատարագի ժամանակ մուտք կը գործեն եկեղեցին, և ազատ կը ծխեն, կը նստին, կը ծիծաղին. կը պտըտին այս ու այն պատկերի տակ ու սիւների առջևը, առանց կարևորութիւն տալու ժամերգութեան արարողութիւններուն. ոչ ոք չի կարող զիրենք արգիլել կամ խօսք մը ըսել... Կարնոյ առաջնորդ Զաւէն վարդապետ ներկայ էր անգամ մը, երբ գՀօլ ու զուռնան բերին ու ածել տուին ամբողջ օր ու գիշեր. անարգելք կ'ընեն ուզածնին որ ժամանակ ալ լինի—տօն օրեր թէ պատարագի միջոցին պատրաստ է սաղ ու դՀօլը, պատրաստ է պարն ու քեյֆը...

Վանքին կից է համանուն գիւղը, որ 20 տունէ կը բաղկանայ, բոլորն ալ հայ. առանձին քահանայ չունին, կը կառավարուին վանքով։ Ամբողջ գիւղացիք կին ու մարդով յիսնապետ Իբրահիմ աղայի ու անոր զօրքերուն ղուլղուղին են կանգնած, անոնց ոչ մէկ խօսքը գետին չի իյնար, ամէն մէկ հրամանը առանց այլևայլութեան կը կատարուի իսկոյն։ Խեղճ գիւղացիք ստիպուած են տալ ամէն ինչ որ ուզեն յիսնապետը ու իր զինուորները։ Բացի ուման չամանէն, անկողնէն, զօրքի հետ կը կիսեն օրւայ եփած կերակուրը. տուներէն ծուխ ելաւ թէ չէ կանգնած է օճախի կամ թոնիրի գլխին զինուորը, տեսնելու թէ ի՞նչ կայ կճուճի մէջ. նայելով տանողի խղճին կամ ամբողջ կճուճը կերթայ, կամ կէսը. օր ու գիշեր կը լրտեսեն խեղճերի տներ ու ծակեր, օճախն ու անկողին... Այս բոլոր հարստահարութիւններ տանելէ յետոյ, պարտաւորուած են գիւրութիւններ տալ անոնց երթևեկութեան միջոցին, անոնց ուտեստը փոխադրել Մօսին գիւղէն չորս ժամւայ հեռաւորութեան վրայ. հայ գիւղացին իր էշ, եզ, կամ ձին առաջը տուած կը կատարէ այս փոխադրութիւնը, հակառակ պարագային երբ մէկին չի յաջողի երթալ օլամ (ձրի աշխատութիւն) և կամ առարկութիւն մը ընէ, իսկոյն կ'ընդունի իրեն արժանի պատիժը. ծեծ կուտէ, տուգանքի կ'ենթարկուի, կամ կը բանտարկուի։ Խեղճերը չեն կարող եռ գալ իրենց կաշիին մէջ, չեն կարող դրացի դրացիի ու բարեկամ բարեկամի տուն գալ ու գնալ, կ'ենթարկուին խիստ հարցաքննութեան՝ թէ ինչո՞ւ գնացիր, կամ՝ ինչո՞ւ եկար։ Պատահած հացկերոյթի ժամանակ պէտք է կանչել անպատճառ թէ յիսնապետը և թէ աչքի ընկնող զինուորները. ասկէ զատ պէտք է տանի նուէրներ՝ օղի, գառ, շաքար, հաւ, գուլպայ, անուշեղէն ևն։ Յիսնապետ ու զինուորներ իրաւունք ունին խառնուելու անոնց տնային ներքին ամէն մէկ գործին. կը խառնուին և վանքի գործերուն, ջրաղացի կարգադրութիւն անոնց ձեռքն է. եկող գնացողէն տուրք մը կառնեն աղունը աղալ տալու կամ փութացնելու համար։ Ամէն խնդիրներու մէջ մտնելու իսկոյն պատրաստ են, ուրկէ կը հանեն իրենց բերանը քսելու իւղը. ամբողջ օրը պարապ ու սարապ, ալ միջոց չի մնար որ գործ չդնեն խեղճ գիւղացիները տանջելու, գործէ ընելու, „տար ու բեր, արի ու գնա,—„Այս ինչ մարդի հետ ինչի՞ խօսեցար, ի՞նչ գործ ունէիր, ինչի՞ գնացիր... դէ՛հ տուր, գնա՛ գառ մը բեր, ուլ բեր, գլուխ մը շաքար բեր, թող ադ ըլլայ քո ջազէն (պարտքտուգանք)“ ևն։

Ու վերջապէս ուզածնին կ'ընեն, քիչ ծածուկն թողնեմ ու բացն ըսեմ. անցեալ տարւայ գարնան, երբ վանքի գիւղի Եղոյի 25 տարեկան ՀարսՕվանի կին Ալմաստը իր հօր տուն Ղարաբազարը կերթար (վանքէն 20 բոպէ հեռու) իրենց քիւրդ ծառայի հետ, իսկոյն երեք հատ զինուորներ վանքէն կը հետևին անոնց ու ճանապարհին բռնած օր ցերեկով երեքն ալ կը բռնաբարեն, որ երկար ժամանակ հիւանդ պառկած մնաց. դարձեալ միևնոյն տնէն վանքի մէջ ապրող զինուորները գիշեր մը 15 հոգով կերթան, ներս կը մտնեն ու բռնի կը տանեն Եղոյի 13 տարեկան աղջիկ Անուշկանը, որուն կը տիրանայ անմիջապէս տասնապետ Ցուրսունը, կը տանի իսկոյն շէյխերէ մէկ քանիսի տունը ու վերջն ալ Բայազէտ. մօտ տարի մը ապրեցաւ այնտեղ ու վերջ առաւ գնաց իր հայրենիք Կարի՞ն թէ Բաբերդ... այս մասին եղած գանգատ ու բողոքը կառավարութեան ականջի մաղին անգամ չդպաւ։

Ալէնի (բացարձակ) ընելու հետ կը կցէին աւելի քաղցրն ալ։ Իսլամի համոզումն է թէ գողցուած բանը շատ քաղցր կը լինի, այդպէս ալ զինուորները ուզածնին անարգել ընելուց յետոյ, կը դիմեն քաղցր ուտելու միջոցներուն. կը գողնան ինչ որ ուզեն, առանձին կամ միացած քիւրդերու հետ, որ յանցանքը պէտք եղած ժամանակ վերջիններու վրայ ձգեն—գողացան վանքի ջրաղացէն անգամ մը 3 բեռ ցորեն, գողացան գիւղէն ուրիշ անգամ 2 ամբողջ հոր ցորեն, գողացան վանքէն 2 եզ և 1 եզ ու 2 կով ալ գիւղէն։

Այս երեք տարւայ ընթացքին վանքի մէջ ապրող զինուորները միայն 5 անգամ փոխուած են, իսկ վերջիններս վեցերորդ ամսն է որ եկեր են։ Յիսնապետ Իբրահիմ էֆ. արդէն հիմակուընէ տիրացեր է Թամօ անունով որբևայրի կնոջ ու կաշխատի ամէն կերպ իրեն սեփհականացնել, անկասկած և շուտով պիտի յաջողի։

Ամէն տեղ ազատ քէյֆի հարսանիք ու կերուխում. ի՞նչն է պակաս... Վանքերը թող մնան, քաղաքից խօսիմ։ Անցեալ դեկտեմբերին էր, երբ Գարա-քիլիսէի մէջ տէր Կարապետի հարս Շուշան, Վահանի կինը կը փախցնէ տեղացի Ահմէտ աղայի տղան Շիւքրին։ Գիշեր մը, երբ Վահան տուն չէր, իր քանի մը ընկերներով անոր տունը կը մտնէ ու Շուշանը բռնած կը տանի, թողլով երեսի վրայ անոր երկու երեխաները. Շուշանը հազիւ 22 տարեկան կըլլայ։

Շուշանի հայրը, եօնջալուեցի տէր Օհան, կը հետևէ իր աղջկան օր ու գիշեր և հազիւ կը յաջողի իր իններ տարեկան տղայի շնորհիւ գտնել ու փախցնել իր աղջկան 40 օրէն յետոյ։ Միջոց մը գաղտնի պահեց ու վերջ հեռացուց դէպի Կովկաս. այսպիսով ալ տէր Օհանը չ'ազատուեցաւ տանջանքէ, իսկոյն բանտ հրաւիրուեցաւ իր փեսային ու 9 տարեկան տղայի հետ։ Բարեբախտաբար 15 օր հազիւ բանտ մնացին, որովհետև հարցաքննութեան միջոցին զատին ինպաստ աղջկան խօսեցաւ։ Իսկոյն վէճ ծագեցաւ անոր ու գայմագամի մէջ. գայմագամը լաւ ծեծել տուաւ զատին, քանի մը օրէն յետոյ զատին մեռաւ։ Գայմագամի ճաշն ալ եփաւ. գանգատներ տեղացին ու շուտով պաշտօնանկ եղաւ, այդպէս ալ ազատուեցան անմեղ բանտարկեալները։ Տէր Օհանը դարձեալ չ'ազատուելով Շիւքրիի ու անոր բարեկամների սպառնալիքներէն կծիկը դրաւ, հեռացաւ իր տունէն ու օճախէն։

Ահա կը տիրէ „սուլթանական կատարեալ անդորրութիւն ու խաղաղութիւն“, կը տիրէ աստուածարան Օրման փաշայի փառքի ու ադամանդէ շքանշաններու

դարը — վանքերը Նոր միաբաններ ունեցան՝ զօրանոց ալ դարձան, բոզանոց ալ։ Մեր Գարա-քիլիսէի Ուչ-քիլիսէ վանքը միակ չէ, եկէք մէկ ոտք ալ Մշոյ դաշտ ձգենք. ահա քեզ սուրբ Կարապետի Հոչակաւոր վանքը, որ ունի իր նոր ու անկոչ միաբանութիւնը, նոյնպէս ալ սուրբ Օհաննու վանքը, Առաքելոց կամ Թարգմանչաց վանքը, Մատնավանք, սուրբ Աղբիւրիկ ևն։ Մեր սրբավայրերը գող ու աւազակի բոյներ դարձան, իսկ հայ գիւղերը անոնց զբօսավայրեր։ Մտնենք Մշոյ հարթ դաշտը, ուր ոչ քար կայ, ոչ թուփ, ոչ դարուփոս ու կիրճ. հայելու նման դաշտի մէջ իրարու մօտիկ հայ գիւղերը ցանցառի նման ցրուած են վանքերէ արձակուած նոր միաբանութեան քարոզիչներ, որոնք կը քարոզեն միայն իրենց սրտի ուզածը։ Այսօր Մշոյ դաշտի գիւղերու կէսը ազատ է այդպիսիների մշտական ներկայութենէն. թէ ինչե՞ր կը կատարուին այդտեղ, միայն Աստուած գիտէ։

Տասնեակ տարիներով, տասնեակ հազարաւոր մշակ պանդուխտներու տուն ու տեղ ելնող մտնող տաճիկ զինուորներէ, անտէր մնացած կիներու գանգատն ալ վերջացաւ. Օրման փաշայի օրով այլևս լռեցին պատրիարքարան գիմումներ ընելէ, այսօր արդէն իրենց սիրելի ամուսիններու փոխարէն՝ իրենց կողքին ցցուած տեսան անկոչ ու տարբեր մարդեր, որոնք այդ խեղճերի հետ իրենց ցանկացածի պէս կը վարուին։ Գիւղերի մէջ տեղաւորուող զինուորներ կ՝օգտուին տեղացիներու ման չամանէն, անկողնէն, վառելիքէն, ուտելիքէն՝ անտէր կիները ասոնց հալաւներ մաքրող են դարձեր, անոնց հագուստներ կարող ու անոնց քէֆը բերող։ Ասոնց ցանցէն ու ձգած շղթայի մէջէն չ՝ազատուիր և ոչ մէկը։ Օրման փաշան իր ընդունած շքանշաններով ուրախացաւ ու սուլթանն ալ իրեն յաջողուած գործով։ Թէ վանքերու և թէ գիւղերու մէջ տիրող արդի կարգ ու կանոնը Օրման փաշայի օրով եղաւ. Օրման փաշայի տեղացած հրահանգներով սուլթանի հրամաններ յարգելով՝ ամէնն ալ կարգադրուեցաւ ու գործադրուեցաւ։

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

28 մայիս 1902, Վան

Վասպուրականի Կարճկան գաւառի մէջ կը գտնուի Ուրանց անունով 100 տունէ բաղկացած հայաբնակ գիւղը. իրմէ ոչ շատ հեռու կը գտնուի Խորոզ քրդաբնակ գիւղը 120 տունէ բաղկացած։ Խորոզցի քրդեր ուրանցի և շրջակայ հայերու անլուր նեղութիւններ կը պատճառեն, քաջալերուած Կեցան գաւառակի Մուսայ պէկէն և Խիզանի շէյխ Սէյտ Ալիէն։ Վերջինիս ինչ դասակարգի հրէշ մ՝ըլլալը արդէն քանիցս գրած ենք. գալով Մուսայ պէկին, նա արդէն գազանութեան չափն անցուցած է։ 96-ի դէպքի ժամանակ 500-է աւելի հայեր իր ձեռքով շողգամի պէս բրդած և անոնց արիւնը խմած է։ Մուսայ և Սէյտ Ալի՝ Խիզան, Սպարկերտ, Ընիձոր, Կարկառ և Կարճկան գաւառներու քիւրդ պէկերու գրեթէ պարագլուխներն ու առաջնորդներն են։ Միշտ կը քարոզեն հրապարակաւ՝ „սպաննեցէք այդ գեաւուրներն, ով չսպաններ, նա իսլամ չէ, սպաննեցէք, եթէ սուլթանը չվարձատրէ, հազրէթի Մուհամէտ անպատճառ կը վարձատրէ“։ Ինչպէս ամէն տեղ, այս տեղերու գայմագամներն ալ անոնց հլու կամակատարներն են և աւարներու բաժնեկից, այնպէս որ ժողովուրդը այլևս անօգուտ կը համարէ բողոքել, բացարձակ հաւատացած լինելով որ իր բողոքները բացի անլսելի մնալէ, իրենց տառապանքն ալ աւելի պիտի սաստկանայ նոյն իսկ բողոքած ըլլալուն համար։ Հազարէն մին.

Խորոզցի քրդերէն Լամուի Խուրշիտ, Մրատի Մէճիտ և Զէդի 96-ի դէպքերէն վերջ տիրացած էին Թաղու Զոր ըսուած մի կալուածի, որ նախապէս Ուրանցիներու կը պատկանէր։ Գիւղի քահանայ Տէր Սարգսի առաջնորդութեամբ՝ գիւղացիներ կը դիմեն Կարճկանի գայմագամութեան. իրենց բողոք անլսելի կը մնայ Մուսայ պէկի հակառակութեան շնորհիւ։ Սովորականին համեմատ, բողոքողներ անպատիժ չպիտի մնային անշուշտ։ Եւ ահա երբ մարտ 27-ին Տէր Սարգսի եղբօր որդին Մանուկ, տատնուհինգ ամեայ պատանի մը, լեռ կերթայ փայտ բերելու, վերադարձին Ուրանից դեռ մօտ վերև յիշուած Մէճիտ, Զէդի և Խուրշիտի որդի Էօմէր կը յարձակին վրան և ոտնուրագով հարուած մը կ՝իջեցնեն գլխուն։ Մանուկ արիւնաթաթախ ետ կը փախչի ազատելու, կը հասնին ետևէն, կը բռնեն և կաշխատին լոյզով (սաթը) գլուխը կտրելու. բաւական տանջելէ վերջ, 20-ի չափ դաշոյնի հարուածներով չարաչար կըսպաննեն։ Գիւղացիներ կը վերցնեն դիակը և կուզեն Վան բերել բողոքելու. Կարճկանի գայմագամ և Մուսայ պէկ վրայ կը հասնին, սպառնալիքներով ետ դարձնել և թաղել կուտան դիակը։ Հայերու այս վերջին բողոքելու ճիգն ևս դատապարտելի կը համարի քիւրդերու աչքին։ Մայիս 14-ին Մանուկը սպանողներու եղբայրը Սայիտ, ուրիշ մէկ քանի քիւրդերով կը յարձակին Ուրանցի հայ կիներու վրայ, որոնք բանջար քաղելու գնացած էին։ Շատեր կը փախչին կաղատին, երեք կիներ անգթօրէն կը բռնաբարուին, որոնցմէ մին՝ Խամ այն ատեն անձնատուր կըլլայ միայն, երբ երկու տեղէ դաշունահար և ուժասպառ կըլլայ։

Մանուկի հայր ոչ Վարդան երեք տարի առաջ իր տան մէջ սպաննուած էր Ալի պէկի եղբայր Մալակէն, դարձեալ քիւրդերու դէմ բողոքած ըլլալուն համար, և իր կինը Կաքաւ ու մէկ տարեկան որդին Մուշեղ իրմէ երկու տարի առաջ սպաննուած էին Խորոզցի Ամարի տղայ Ղազէէն և Եագուպէն, երբ ինքը Վարդան փախըստական կապրէր քիւրդերու երկիւղէն։

Ապրիլի սկիզբները Արճիշէն Վան բերին մի հայ կին, զոր բռնութեամբ իր քով պահած էր մի արճիշեցի Տէվրիշ, առարկելով թէ իր ազատ կամքով մահմէտականութիւնը ընդունած է։ Իր ամուսինը, Լևոն, աղերսագրով խնդրած էր իրեն վերադարձնել իր կինը, որ երկու տարեկան տղայ մ՝ալ ունի։ Կինը քաղաքիս շէյխի մը տան մէջ քանի մը օր պահելէ վերջ՝ դարձեալ կը յանձնեն Տէվրիշին Արճէշ տանելու, առանց դոնէ օրինական ձևակերպութիւններու. (պէտք էր հայոց առաջնորդարան ղրկել, մէկ քանի օր պահել և համոզել. և ապա երբ հրապարակաւ յայտարարէր իր ազատ կամքով մահմէտականութիւնն ընդունիլը, յանձնել ուր որ պէտք էր)։ Կինը երբ Աւանց կերթայ, կուսակալի քեռորդին Էտհէմ պէկ գիշերանց կերթայ հոն իբր թէ մասնաւոր յանձնարարութեամբ և կը բռնաբարէ։ Կինը գիւղի մէջ կուլայ կարտասուէ, կը խնդրէ զինքը ազատել։ Գիւղի քահանան Տէր Սահակ կը բողոքէ տեղի ոստիկանութեան, անլսելի կը մնայ իր բողոքը։ Տէվրիշ կինը առած կը մեկնի Արճէշ։

Կարճկանի մէջ ինչպէս և այլ տեղեր քիւրդերու պատճառաւ հարիւրաւոր ընտանիքներ անբարոյականութեան մատնուած են։ Ամէն քիւրդ՝ պէկ թէ խոլամ, բռնութեամբ կը գիշերեն այն տուներ, ուր կամ այր մարդ չկայ և կամ եղածներն ալ ոչխարացած են բռնութիւններու ճնշման տակ։ Հայ կինը, համեստութեան այդ աւանդական տիպարը, չէ կարող այլևս պաշտպանել իր պատիւը, երբ աչքին առջև կը տեսնի իր ամուսինը և կամ զաւակը քիւրդի դաշոյնի սպառնալիքի տակ։ Հայ գիւղացու տնտեսական դժոխային վիճակին վրայ աւելցած է իր նամուսի սրբապղծումը, և նա, նամուսի համար մեռնող այդ հայը, չէ կարող արգիլել Որո՞ դիմէ, ո՞ւր բողոքէ, գայլին ճանկէն վագրի գիրկը ապաստանի։ Վերջին յուսահատական քայլին դիմելու ալ զէնք չունի, ճարելու միջոց չունի։ Քանի՛ քանի՛ ֆէդայական կռիւներու մէջ այդ գառան նման հայեր իրենց գիւցազնութեամբ ահ ու սարսափ տարածած են զիրենք խոշտանգող դահիճներու վրայ։ Քիւրդերու և Թիւրքերու մէջ առած է արդէն. „Աստուած հայուն քոր տայ, եղունգ չտայ“, և մեր չար բախտէն քոր շատ ունինք, բայց ոչ մեր եւրոպաբնակ եղբայրներ, ոչ քրիստոնիայ գթասիրտ (?) Եւրոպան մեզ գոնէ եղունգ տալու գութ չունին։

Սևան գիւղը 60 հայ և 40 քիւրդ տներէ կը բաղկանայ. Վանէն 6 ժամ հեռի Արջակի գիւղախմբին կը պատկանի։ 1896-ի դէպքերէն վերջ հոս բնակութիւն հաստատած է Միրզա աղա անունով քիւրդ մը, որ ամբողջ գիւղը իրեն գերի դարձուցած է։ Ամէն մէկ տուն պարտաւոր է միշտ մէկ-մէկ մարդ տալ անոր համար աշխատելու, ինչպէս նաև մէկ-մէկ արտ վարուցանի համար. բացի դրամական տուգանքներէ և ուրիշ անթիւ օրամներէ, չնայելով որ ինք ափ մը հող չունի գիւղին մէջ։ Վերջերս իր չարութիւնները ծայրայեղութեան հասած ըլլալով՝ հայեր կուզեն գաղթել և գիշեր մը իրենց սայլերը բեռցնելով կը դիմեն Մակուրցիներու կողմ։ Հաղիւ թէ գիւղէն երեք ժամու չափ կը հեռանան, Լեմ գիւղ բնակող Ահմէտ խանի տղան, Թաթար, խան անոնց դէմ կելլէ և սպառնալիքի տակ կը վերադարձնէ իրենց գիւղը։ Հայեր կուզեն դիմել կառավարութեան՝ „ծովն իմնողը օձին կը փաթթուի“—սակայն Շամղեկցիներու պետ Հասան աղան կրսպառնայ անոնց գիւղը տակնուվրայ ընել, եթէ այդպիսի մի քայլ ընեն, և կը պահանջէ երեք հարիւր ոսկի վճարել Միրզա աղային, որպէս զի գիւղէն դուրս ելնէ։ Վերջինս Շամշիկցի աշիրէթէն է։ Գիւղացիներ շարեր մնացեր, ինչ ընելնին չեն գիտեր։

Շատախի Նախորդ և Գաւաշի ներկայ գայմագամը, Լուֆթի պէկ, զարգացած Թիւրք մ՚է, որ ոգին ի բուն կաշխատի իրեն յանձնուած գաւառներու ճանապարհներու շինութեան ալն։ Բայց ի՞նչպէս, որու ծախքով և աշխատութեամբ.—հայուն, միշտ հայուն։ Հայն է որ կաշխատի իբրև մշակ, կը հայթայթէ սայլեր՝ քար հող կրելու, փայտ՝ կամուրջներ շինելու, առանց նոյնիսկ հացի մը սև փող ստանալու կառավարութենէն։ Ճանապարհներու վրայ ոչ մէկ Թիւրք կամ քիւրդ կը տեսնես աշխատող, ամբողջ հայեր են, որոնք թողած իրենց արօրն ու գութան, զապթիէներու խարազանի հարուածներու տակ եկած են տարապարհակ աշխատութեան, շատ անգամ իրենց վերակացու զապթիէներու հացն ալ իրենք բերելով։ Մանր մունր քիւրդ պէկեր աջակից են Լուֆթի պէկին և ամէն կերպով կը ջանան անոր հաճոյանալ։ Գաւաշցի Հիւսէին աղան Ապրիլի 6-ին Գանձակ գիւղի քանի մը հայերու տուներ կը քակէ և անոնց գերանները իրենց տէրերու ուսերուն բեռցնելով կը բերէ Անգղ գետի վրայ շինելիք կամուրջին յատկացնելու և այսպիսով աշխարհաշէն գայմագամին սիրտը շահելու։ Ինչպէս Գաւաշի, նոյնպէս առ հասարակ Տաճկահայաստանի գաւառներու բոլոր ճանապարհներն ամէն տարի կը շինուին, կանոնաւոր և հաստատուն ճանապարհներու բաւելիք դրամէն աւելի է որ կուտայ խեղճ հայ թէ թիւրք ժողովուրդը։ Քաղաքներու մէջ իւրաքանչիւր արու բնակիչ պարտաւոր է 4 մշակի վարձք տալ լեցուն գնով. իսկ գիւղերու մէջ պահանջի չափ ու սահման չկայ։ Վանի կուսակալութիւնը տարին հազարաւոր ոսկիներ կը գանձէ, հազարաւոր գործաւորներ ձրի կաշխատցնէ, սակայն ոչ քաղաքի մէջ և ոչ գաւառները քիչ շատ կարդին մէկ ճանապարհ չէ կարելի գտնել՝ բաւ է անձրև կամ ձիւն մը. ահա ամբողջ գիծը կ՚աւրուի և դարձեալ նոյն օրամ, նոյն աշխատութիւն և այս ամէն տարի։

Երեք թիւրք կոմսարներ՝ Ապտուլլահ, Գէհեմ և Սիւլէյման պաշտօնանկ եղած են 4-5 ամիսներէ իվեր։ Ասոնք ձերբակալուած էին քաղաքը, տան մը մէջ, ուր 4-5 հայ կիներ բերած էին հոն անբարոյական նպատակներով։ Գէրիք Հիւսնի փաշայ խոստացած էր անոնց պաշտօնի վերակոչել տալ, եթէ յաջողին Վասպուրականի մէջ գտնուող դրսեցի յեղափոխականները ձեռք ձգել և կամ յուզումներ առաջ բերել։ Այն օրէն սկսեալ ալ չեն դադրած միջոցներ ստեղծելէ։ Անցեալներ թիւրք երիտասարդի մը կը յանձնեն նամակ մը հայերէն, տաճկերէն և ֆրանսերէն խմբագրուած և իբր թէ հայ գիւղացիներէ գրուած Պաշգալէի միւթէսարիֆի հասցէին։ Երիտասարդը նամակը կը տանի Պաշգալէ, յայտնելով թէ ճանապարհին 5-6 զինուած ֆէդայիներ բռնեցին զինքը և նամակը տին իրեն միւթասարիֆին յանձնելու։ Միւթասարիֆը երիտասարդը կալանաւոր կը ղրկէ Վան՝ կուսակալին։ Վերջինս երկար քննութիւններէ վերջ կը հասկնայ գործին եղելութիւնը։ Կոմսարներու նպատակն էր մէկ քանի յայտնի հայեր ձերբակալել տալ և այսպիսով գործ մը տեսած ըլլալ։

Ամբողջ նահանգին մէջ յայտնի ճշմարտութիւն մը դարձած է կոմսարներու էնթրիկները, և այժմ ոչ միայն հայեր, այլև թիւրք գլխաւոր պաշտօնեաներ անգամ հաւատք չեն ընծայեր անոնց։ Մեղաւոր չեն անշուշտ անոնք ալ, երբ կը տեսնեն որ տիրող ռէժիմը պաշտօնի կը բարձրացնէ միայն այն անհատներն, որոնք տրամադիր են ամէն ստորնութիւններ գործելու. իսկ առաքինի և պարտաճանաչ անձերու համար, թիւրք թէ հայ, կառավարական ամէն ճանապարհներ փակուած են։

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԷՆ

31/13 օգոստոս 1902

Երթևեկութեանց խստութիւնը կը շարունակի, այնպէս որ, ինչպէս ասկից առաջ ալ առիթ ունեցած ենք գրելու, մէկ նահանգէն մօտաւոր մէկ նահանգն անցնելու համար իսկ անլուր դժուարութիւններ կան։ Բայց երկրի ժողովուրդը բաւարարութիւն չի գտներ իր հողին վրայ՝ ուր կեանքի, պատի, ինչքի անապահովութեան քով՝ էր

հացն ալ կը պակսի։ Ձեզի գաղափար մը տալու համար թէ ի՞նչ դժոխային դրութեան մէջ է որ կապրի հայը, բաւական կը սեպեմ հետևեալ իրողութիւնները ձեր նկատառութեան յանձնել։

Ամէն շաբաթ գրեթէ քսանով, յիսունով խումբեր ճամբայ կ՚ելլեն ասկէ գաղտնի ճամբաներով արտասահման անցնելու. ամէնքն ալ Ամերիկա է, ուր երթալ կ՚ուզեն։ Իրաւ է թէ այդ խումբերու մէջ շատ քաղաքացիներ կան, բայց մեծամասնութիւնը գիւղացիներէ կ՚ամբողջանայ։ Երբ դուք տեսած ըլլաք Խարբերդի դաշտը, ուր ափ մը անմշակ հող իսկ չի կայ, երբ իմանաք թէ Խարբերդի դաշտին պտղաբերութիւնը առածի կարգ անցած է Հայաստանի մէջ, — „Խարբուն օվասի՝ ալթուն եուվասի“, — երբ մտէն հեռևիք հայ երկրագործին չարքաշ, լարուած աշխատասիրութեան՝ այն ատեն միայն պիտի կրնաք լայն ծանօթութիւն մ՚ունենալ մեզ պաշարող թշուառութեան մասին։ Արդ, ո՛չ այդ գերմարդկային աշխատութիւնը և ոչ ալ բնութեան լիառատ հոգածութիւնը կարող են նախնական սնունդ մ՚ապահովել և որովհետև պանդխտութիւնը իսպառ արգիլուած է, և որովհետև նաւահանգիստները երկաթէ պատնէշներով ամրափակուած են՝ հայաստանցի ժողովուրդը կը դիմէ մտքէ չ՚անցած զոհողութեանց ու ճարտարութեանց։ Մասնաւոր թիւրք ջորեպաններ կան, որ կը բանին դէպի Կարնոյ կամ Հալէպի կողմերը. այդ ջորեպանները սովորական ճամբաներէն դուրս գաղտնի, ոստիկանութենէն անտեսանելի անցքեր կը ճանչնան, կամ՝ այլևայլ քաղաքներու մէջ աս ու ան փոլիսին հետ յատուկ համաձայնութեան եկած են՝ առանց անցագրի ճամբորդներուն անցքը ապահովելով։ Հոս մարդ գլուխ մօտաւորապէս 10 ոսկիի կը տակարկեն մինչև արտասահման անցնելու պայմանով. դիւրին է հաշուել թէ ջորեպան մը մէկ անգամուան փոխադրութեամբ հարիւրաւոր ոսկիներու շահ մը կ՚ունենայ։ Բայց խնդիր է գիտնալ թէ փախչելու ստիպուած մարդը ի՞նչ չարչարանքով, ի՞նչ ծանր ու անգութ տոկոսներով է որ պէտք եղած դրամը կը գտնէ ասկէ անկէ և ճամբայ կ՚ելլէ։ Հիմա մտքով հետևեցէք այդ փախստական ուղևորութեան. պէտք է 10-15-20 օրուան ճամբայ մը մտքով կտրել, գիշերները առանց անկողնի, առանց ծածքի, քարի մը վրայ, լեռան մը, ձորի մը մէջ գիշերել, շատ անգամ օրերով անօթի մնալ. շատեր երեք օր, երեք գիշեր ոստիկանութեան աչքէն ազատ մնալու համար ստիպուած են խոտ ուտել. պէտք է մտաբերել մէյ մը Հայաստանի լեռներն ու բարձունքները, ուր ամառը, այս ամսուն իսկ, ձիւնն անպակաս է և մարդ ստիպուած է կրակ ճարել տաքանալու համար. այս տեղերուն վրայ է որ շաբաթներով անպատսպար, մերկ ու անօթի կը մնան դժբախտ փախստականները։ Բայց յաճախ ու էն ահաւորն այն է որ սահմանագլխին մօտիկ, այդ բոլոր տանջանքներէն անցնելէ ետք՝ յանկարծ կը ձերբակալուին, ու գրեթէ միշտ ալ այսպէս կ՚ըլլայ. հարիւրին յիսունը եթէ կը յաջողի խուսափիլ, միւս կէսը բռնուելով ետ կը դարձուի։ Հիմա ալ հետևեցէք այդ դարձին՝ բանտ բանտ, ձեռքերը շղթայուած, անօթի, վրան գլուխ քրքրուած, բզքտուած, մերկ ու արիւնլայ ոտքերով, քանի որ այդ ձերբակալութեան անմիջապէս կողոպուտն ալ կ՚ընկերանայ, կամ՝ չէրքէզներ, քիւրդեր կը կողոպտեն և կամ կառավարական պաշտօնեաներ։ Թշուառութիւնը հինգ անգամ դժոխային կը դառնայ այդ կսկծեցուցիչ դարձէն ետք. աղքատութեան կ՚ընկերանայ նաև պարտք մը ալ, որ երթալով պիտի աճի տարէ տարի։ Եթէ խեղճ գիւղացին պզտիկ կտրոն մը, ափ մը պարտէզ ունէր—որը գրաւի դնելով անկասկած կրցած էր իր ճամբու ծախքը հայթայթել — ան ալ ձեռքէն կառնուի. ա՛լ անկէ ետք Աստուծոյ ողորմութիւնն հասնի՛... Անցած շաբթուն ոստիկանութիւնը լուր առած ըլլալով թէ խանգեղցի ծանօթ թիւրք ջորեպան մը նորէն փախստականներ կը տանէ՝ փութով հեծելազօրքեր ու փոլիս-գօմիսէր մը ղրկեց Մալաթիայէն անդին, ուրկէ 40 գիւղացիներ ձերբակալելով ետ դարձուցին։ Տեսնելու էր այն ողբալի, այն վերին աստիճանի թշուառութիւնը, որ կը ծածկէր զանոնք, և այն յուսահատութիւնը, որ դրոշմուած էր անոնց դէմքերուն վրայ։ Խումբը կանգ առաւ կառավարական շէնքին առջև. հոն այդ թշուառները սկսան „հա՜ց, հա՜ց կ՚ուզենք մեր զաւակներուն“ աղաղակել։

Այսօր լոկ Խարբերդի դաշտէն ու քաղաքէն 15,000-ի չափ պանդուխտ ունինք Ամերիկա, որոնց ընտանիքները հոս կը մնան, ոչ միջոց կայ պանդխտողներուն՝ հայրենիք դառնալ և ոչ ալ հոս մնացողներուն՝ երթալ իրենց սիրելիները գտնել. առևտրական կեանքը օրէ օր կ՚ոգեւարի, առևտրականներուն մեծամասնութիւնը, որ փոքր դրամագլուխներէ, խանութպաններէ կազմուած է, տարէ տարի կը քայքայի, կը չքանայ։ Ապառիկները դժուարութեամբ կը գանձուին, որովհետև թիւրքեր՝ բռնութեամբ հետզ սակարկելէ ետք՝ իրենց տալիքը ետ չեն դարձներ, սպասելով երկրորդ ջարդի մը. դատարանը բաց է, այո, սակայն ով պիտի ուզէր հոն դիմել, քանի որ ամենափոքր դատ մ՚իսկ տարիներով կը ձգձգուի ու էն ետքն ալ կը կորսուի ի մեաս հայուն։

Դահէմ անունով գիւղ մը ունինք, որ նահանգական կուսակալանիստ քաղաքէն երկու ժամու չափ հեռաւորութիւն մը ունի. թիւրք և հայ խառն ազգաբնակութեամբ գիւղ մըն է, որուն հայ բնակչութիւնը երկրագործներէ կը բաղկանայ։ Այդ գիւղին կարևոր հողատէրն է Հաճի Պէկօ ըսուած հռչակաւոր աւազակը, որ քսան երեսուն տարիներէ իվեր ոճիրի տեսակ չէ մնացած որ փորձած չ՚ըլլայ. գողութիւն, բռնաբարութիւն, անարգանք հասարակ յանցանքներ են, թիւրքերն անգամ զինքը Զալիմ բառով պսակած են։ Անցած օր այդ Դահէմի հայ գիւղացիներն ա՛լ հոգինին բերանին առնելով, ա՛լ չի կրնալով դիմանալ եղած հարստահարութիւններուն, ամբողջ գիւղով՝ մանուկ, ծեր, կին, երիտասարդ՝ բոլոր իրենց սայլերը, երկրագործական գործիքները բերին կառավարական շէնքին առջև, բարձրաձայն յայտարարելով թէ այլևս չեն կրնար դիմանալ Հաճի Պէկօի ոճիրներուն, ուստի պէտք է որ իրենց նոր տեղ ցոյց տրուի, ուր հաստատուին։ Ամբոխը հաւաքած էր այդ միամիտ, թշուառ գեղջուկներուն շուրջը... Աշխատող, արդիւնաբերող ձեռքն էր որ իր կուրծքին ծալուած՝ աշխատութեան, արդիւնաբերութեան գործիքին առջև՝ բռնաւորին պատիժը կը խնդրէր։ Կառավարութիւնը անտարբեր սառնասրտութեամբ հազիւ հաճեցաւ Հայ Առաջնորդը կանչելու և խորհրդակցութիւն մը ունենալու հետը։ Առաջնորդը բացէիբաց յայտարարեց Հաճի Պէկօին ասկէ առաջ ըրած բոլոր չարիքներուն, կեղեքումներուն թուումն մասանցը, պատմեց վերջին օրերուն վառած կալերը, գողցած ցորենի, գարիի դէզերը, հարսներու բռնաբարութիւնները, միևնոյն ատեն հաւաստելով կուսա-

կալին, թէ թիւրք պէկեր, կարևոր անձնաւորութիւններ կան իր ըսածները հաստատող։ Կուսակալը հրամայեց որ խնդիրը պաշտօնական գոյն առնելու համար, գիւղացիները դատարան դիմեն։ Գիւղացիք դատարան դիմեցին և դատը կը շարունակուի, բայց Հաճի Պէկօն իր գաղանաբարոյ զաւակներէն մէկ-երկուքին—որոնք գործակից են իրենց 60 տարեկան հօր—անմիջապէս զինուորի լաթ հագցուց և զինուորագրել տուաւ զանոնք, որպէս զի քաղաքական դատարանի իշխանութենէն ազատ մնան։ Նայինք ի՞նչպէս պիտի վերջանայ այս դատը, երբ հայերուն հետ միասին կ'աշխատին Ծողէ գիւղի թիւրք պէկերն ալ։

Ամէն հայ գիւղ ալ առաւել կամ նուազ Դահէմի ճակատագիրն ունի, իր մեծ կամ պզտիկ Հաճի Պէկօներով։ Արդ, երբ հաց չի կայ, երբ հարստահարութիւնը իր եղերքներէն կը յորդի ալ, երբ կառավարութիւնը փոխանակ պահպանելու՝ ինքն ալ իր կողմէն կը հարստահարէ՝ ի՞նչ պէտք է ընել. պէտք է անիծել ու հեռանալ այս հողէն, այնպէս չէ՞. բայց ահա բոլոր սահմանագծերը ամրացած, շղթայուած են և արտասահմանի անցքը արգիլուած է։ Ո՞ւր դիմենք, ո՞ւր երթանք...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱԽՊԷՐ
(ՄՈԿԱՑԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ)



Կուով ապրեց, բայց կուով չմեռաւ...

Քառասուն տարիք լրացրել էր, երբ երկար հիւանդութիւնից յետոյ, Գաղթաշէնում մեռաւ Ախպէրը։

Ախպէրը կամ Յարութիւնը բնիկ մոկացի էր։ Իր հօր տունը գեղջկական մի համեստ ապրուստ ունեցող տներից մէկն էր. հարի խնդիրը չէր նեղում նրանց, դրա համար էլ Դազատ էին տան տղերքը, ազատ էր Յարութիւնը, որ իր ընկերների մէջ ամենէն ճարպիկ ու կուարարն էր ճանաչուում։ Մոկաց լեռնցին՝ հէնց փոքր ժամանակից վարժուած կուի, մինչև մեծանալն էլ չմոռացաւ այդ արհեստը։ Երբ հասակն առաւ՝ սկսեց շարունակ կուել թշնամի քրդերի դէմ, ու միշտ յաջողւում էր նրանց նեղը ձգել։ Այդ կռիւներն ու զալմաղալը յառաջ էին գալիս միմիայն իւրաքանչիւրը իր „ես“ պաշտպանելու համար, ուրիշ նպատակ չկար որ զօր էին տալիս յանկարծ իրենց չօմախին ու խէնչալին. այդ դատարկ „ես“ն էր, որ նրանց մէջ լեցնում էր իրար դէմ վրէժխնդրութիւն ու վառում նրանց ոգին։

Արդէն նա երիտասարդ էր ու ամուսնացած, երբ դիմեց քաղցր դժոխքին. պանդխտութեան ցուպը ձեռքն առած՝ մեկնեց դէպի Պոլիս ու Իզմիր. այդ տեղեր նա մնաց մի քանի տարիներ. այդ տեղերում գտնուած ժամանակ նա օգտուում է տեղական ազատ շրջաններից ու միշտ վառ է պահում իր վրէժխնդրութիւնը դէպի թշնամին։ Այդ տեղերն էր, որ անուս Յարութիւնի ականջին էր կաթում Հայաստան ու Հայրենիք անունը, նրա քաշած տառապանքը, նրան շրջապատող ու տանջող թշնամիները։ Նա հասկացաւ, որ թշնամին թշնամի է՝ որտեղ որ էլ նա լինի, հասկացաւ միանգամայն որ պէտք էր կուել այդ ընդհանուր թշնամու դէմ շարունակ մինչև կ'ազատուի նրա ճանկերից Մայր Հայրենիքը։ Այդ տեղ յեղափոխական ոգին արմատ ձգեց նրա սրտում։

1890 թուականին էր, որ նա թողնում է Իզմիրի ու Պոլսի շրջանը և շտապում իր Հայրենիք—Մոկս։ Մոկսում Յարութիւնը մի խանութ է բաց անում ու սկսում է առևտրով պարապել։ Առևտուրը պատճառ է լինում նրան շարունակ յաճախել Վան քաղաք, ուր Յարութիւնը դիւրութիւն կ'ունենայ իր յարաբերութիւնը պահպանել յեղափոխական Արմենական խմբակների հետ։ Անցնում է երկու երեք տարի, նա կը տեսնի ուրիշ մարդոց, որ գործով ու կամքով աւելի մօտ էին իր սրտին, ուստի և համակրում ու միանում է նրանց հետ, թողնելով Արմենականներին։

Այդ կուսակցութիւնը Դաշնակցութիւնն էր։

Ախպէրը այնուհետև դաշնակցական էր. 1894 և 95 թուականներին շարունակ քաղաքումն է լինում։ Իր այդ երթևեկութեանց ժամանակ մի անգամ ուշանում է սովորականից դուրս. անցնում է մի քանի օր և գիւղացիք լսում ու տեսնում են, որ Ախպէրը եկել է զինուած մի խումբ ընկերներով։ Դա առաջին անգամն էր, որ ֆէդայիների խումբը զինուած մտնում էր Մոկս։ Ադաչ էլ Յարութիւնը միշտ կռիւներ էր ունեցել դրացի քրդերի հետ ու քանի քանի անգամներ էլ տեղական բանտը մտել ու դուրս եկել, միևնոյն տեսակի կռիւներ էլ ունեցել էր շատ անգամ իր դրացի հայերի հետ և ծեծել ու վիրաւորել էր նրանց, բայց յեղափոխական դառնալուց յետոյ նա իր ուժերը միմիայն լարեց ընդհանուր թշնամի՝ թիւրք ու քրդի դէմ։

Յեղափոխական շարժումների տաք օրերն էին. Ախպէրն այլևս բաց էր թողել իր առևտուրն ու գործը, հրացանը ձեռքին գիշեր ու ցորեկ կուի մէջ էր միշտ Մոկս, Վան ու Շատախ. առաջնորդում էր այս ու այն խմբին, ապրում անմահ Պետոյի հետ և մասնակցում նրան պատահած կռիւներում։ Նա ներկայ էր 96 թուականի Վանում եղած դաշնակցական խմբում, որ ընդհարում

ունեցաւ բազմաթիւ զօրքերի հետ, այնտեղից դուրս եկած խումբը կուռով շարունակեց իր ճանապարհն մինչև Պարսկաստան։ Ճանապարհին բռնեց Կէմի կուին, ներկայ էր Բողոս քեսանի նշանաւոր կուին էլ, և այսպէս շարունակ կուելով Ախպէրը հասաւ Սալմաստ և միացաւ տեղական խմբին։ Սալմաստում նա վայելում էր ընկերների յարգանքը և ունէր նրանց վրայ մեծ ազդեցութիւն։ Իր ունեցած բազմաթիւ համակրողների հետ արշաւանքի հարցի մէջ Ախպէրը նրա ամենամեծ հակառակորդներից մէկն եղաւ. նա և իր ընկերները չէին համոզւում արշաւանքի ծրագրին և պահանջում էին խմբով անցնել երկրի ներս. սակայն, ընկերասիրութիւնը և դիսցիպլինը վերցրին վեր և հակառակորդները համաձայնեցան կազմակերպութեան ընդհանուր որոշումին։

1897 թուականն էր, դաշնակցական խումբերը բուռն ոգևորութեամբ դիմում էին դէպի Առավուլը։ Ախպէրն էլ նրանց հետ էր հարիւրապետի պաշտօնով։ Արշաւանքին չհամակրող Ախպէրը Առավուլի տաք կուում այնքան կրակ է կտրում, որ այլևս չի ուզում յետ նահանջել իր ընկերների հետ, ոգևորուած կանչում է նրանց ու խնդրում շարունակել ճանապարհը մինչև Վան։ Բայց որոշումը մնաց անփոփոխելի և խումբը յետ նահանջեց անվնաս։

Սալմաստում սկսեցին խուզարկութիւնները, կուից վերադարձողները սկսան ցրուիլ՝ որը դիմեց իր հայրենիք, որը թագնուեց կամ հեռացաւ։ Այդ ժամանակն էր որ Ախպէրը զինուած մի խմբով դիմեց դէպի սահման, երկիր, բայց կոտորածը վրայ տուեց, ամէն բան տակն ու վրայ եղաւ, յեղափոխականների համար սկսեց նոր շրջան։ Ախպէրն էլ երկիրը մտնելու միտքը թողած, ընկերներին ցրուեց և փակուած մնաց մի խուլ անկիւնում, զբաղուելով աւելի համեստ, բայց ոչ պակաս կարևոր գործով. նա անդադար ընկնում էր այս ու այն կողմ, միշտ նոր նոր միջոցներ էր հնարում երկրի ինքնապաշտպանութեան գործին նպաստելու համար։

Շնորհիւ իր բնական խելքի, համբերող ու տոկուն բնաւորութեան ու իր ստանձնած գործին գիտակցաբար վերաբերուելուն, Ախպէրը կարողանում էր մեծ ազդեցութիւն ձեռք բերել ոչ միայն հայդուկների, այլ և իրենից անհամեմատ աւելի կրթուած ընկերների վրայ։ „Ախպէր“ անունն էլ աւելի քան յարմարւում էր նրան և մի տեսակ նահապետական բնաւորութիւն էր տալիս իր դիրքին։

Ախպէրը այն ուժերից էր, որոնց վիճակուած է ուրիշներին տանել իրենց յետևից՝ գիւղում լինել ռէս, կուի դաշտում խմբապետ։ Նրա սրտի մէջ եռող կրակը թոյլ չէր տալիս նրան գոհ լինել խաղաղ գործունէութիւնից և վերջին տարիների ընթացքում Ախպէրը միշտ դժգոհ էր, միշտ ախ էր քաշում և երազում՝ երբ է գալու այն օրը, երբ նա կը մտնի երկիր զէնքը ձեռքին, երբ կը լսէ շուրջը գնդակների վզվզոցը, ընկերների խրախուսանքը և թշնամու աղիողորմ ձայները...

Բայց իզո՞ւր... Իր ցանկացած բախտին չ'արժանացաւ Ախպէրը, իրեն վայել մահով չմեռաւ կտրիճը։

Երկար փակուած մնալը, աննպաստ պայմանների տակ ապրելը հետզհետէ թուլացրին նրա լեռնական ամուր կազմուածքը և մատնեցին նրան ծանր հիւանդութեան, որին զոհ գնաց յունիսի 25-ին չորեքշաբթի առաւօտը։

Դաշնակցութիւնը այսպիսով կորցրեց իր ամենաթանկագին կուռող ուժերից մէկն էլ։

ՊԵՏՐՈՍ ՍԵՐԵՄՃԵԱՆ

(ՆԱԽԿԻՆ ԸՆԿԵՐՈՋ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

—

Ահա տեսնում եմ նրան՝ հայդուկի տոպրակը մէջքին, ջուխտ փամփշտամանները կապած, հրացանը ձեռին, կանգնել է Այգեստանի Աթարաց թաղի մի երկյարկանի տան առաջ և խորին սառնասրտութեամբ գնդակներ է ուղարկում դիմացի վարժարանում դիրք բռնած տաճիկ թնդանօթաձիգներին։ Նա հանգիստ է. երկիւղը չէ ցնցում նրա առնական դէմքի գծերը. նա ամբողջ էութեամբ իր դերի մէջ է և մի քայլ յետ չէ գնում, թէև համոզուած է որ ամէն մի վայրկեանը կարող է մահ բերել։

Ամբողջ վեց տարիներ են անցել այն օրից, բայց ես տեսնում եմ նրան, որովհետև նրա դէմքը դրոշմուել է իմ յիշողութեան մէջ անեղծանելի գծերով և ես կը նկարէի նրան, եթէ նկարիչ լինէի։

Նա չէր խօսում, նա խօսքի մարդ չէր. նա ծնուել էր հայդուկ լինելու, աճել էր՝ կուելու համար։ Նա իսկական հայդուկ էր, յեղափոխական, և հայ յեղափոխականի տանջալից օրերը երբէք չկարողացան նրա բերնից տրրտունջներ թռցնել։

Յիշում եմ, երբ Արաղայի դաշտում, Խաչէն գիւղի դէզերի մէջ ապաստանած՝ վառ երևակայութեամբ ու բուռն ոգևորութեամբ մեր անելիք կռիւների մասին էինք խօսում ու թշնամիներին հալածելով՝ մինչև Մուշ, Սասուն, Նոյնիսկ Զէյթուն հասնում, Պետրոսը շուռ եկաւ դէպի մեզ և ասաց ծիծաղելով.

— Հէյ, Զէյթո՞ւն... շատ է հեռու. ես բոբիկ ոտներով այդքան տեղ գնալ չեմ կարող։

Պետրոսի ասածը մենք չհասկցանք և կարծեցինք, որ անտեղի հանաքով մեր ոգևորութիւնն է ծաղրում. բայց նա նորից ծիծաղեց և ջուխտ ոտները մեզ մեկնեց... Աստուա՜ծ իմ. բոլորովին բոբիկ, նոյնիսկ արիւնոտուած... Նրա սօլերը դեռ երէկ փչացած լինելով՝ դէն էր ձգել, ամբողջ գիշերը, Սագալու ժայռոտ դիրքերից մինչև Խաչէնու դէզերը բոբիկ եկել, և այդ տաժանելի ճանապարհին չէր արտասանել մի բառ, որ ցաւ կամ դժգոհութիւն արտայայտէր, մի անգամ „ո՞ւֆ“ չէր արել, այժմ էլ դեռ արհամարհում էր այն սարսափելի դրութիւնը, որ ուրիշներին գուցէ ծայրայեղ յուսահատութեան հասցնէր։

1896 թուականին մեր խմբի օրհասական ճիգերի պահն էր նա. — իբրև ընկեր՝ պաշտելի, իբրև կուռող՝ անգնահատելի։

Հոգի՞ն... հրեշտակային ցոլքով օժտուած...

Երբ մենք չորս օրուայ կռիւներից յետոյ, նստած Արտօսի սպիտակափառ գագաթին, տխուր-տրտում սուզուել էինք անթիւ մտածութիւնների անդունդը և մեր ներկայ աննախանձելի դրութիւնն էինք քննում, թէ ո՞րտեղ մնաց Վազգէնը, որին մահամերձ դրութեան մէջ կնոջ շորով փախցրինք Շուշանց գիւղ. ինչ եղաւ Վարդանը իր խմբով. ո՞րտեղ մնաց մեր միակ ուղեցոյց Ախպէրը, այժմ առանց վալադի ո՞ւր պէտք է գնանք, որպէսզի կարողանանք մեր չորս օրից իվեր սոված ստամոքսների բողոքը լռեցնել, — մինչդեռ մենք այդ տարտամ դրութեան մէջ վարանուած էինք և նոյնիսկ տրամադիր տրանջալու, Պետրոսը մի քարի տակ նստած, սառած մատներով աչքերի բիբերն էր սրբում, որտեղից աղի կաթիլները ցրտից

բուրեղանալով՝ գլորւում էին. Նա արտասւում էր և „Խէչօ, Նիկօլ“ մրմնջում... Նա մեր ընկերներն էր ողբում, որոնք կէս օր առաջ, իրենց քառապատիկը գլորելուց յետոյ՝ նահատակւել էին Հայոց-Ձորում...

Մի անգամ միայն տեսայ Պետրոսին իր սկզբունքին դաւաճանած, ելած սառնասրտութեան սահմանից. այդ վարագումն էր:

Վարագ... ի՜նչեր չեն կապւած այդ անւան հետ... Ապարանջան-աղբիւրը, որ իրաւամբ կրում է այդ անունը իր վրայ, խորին թախծութեամբ գլորում էր իր կաթիլները մախմուռ-կանաչների վրայով և մենք նստած նրա ափին, մեր այրւած սրտերն էինք հովացնում այդ անմահական ջրերով: Ո՞վ գիտէ, գուցէ արիւն կար շաղախւած այդ ջրերի հետ, գուցէ նրա հոսանքը յորդացած էր մեր հայդուկների արիւնով... բայց նա քաղցր էր և մենք խմում էինք: Ահա այդտեղ Պետրոսը նայեց չորս կողմը, Կողբանայ այրւած տները տեսաւ, Գրիգոր-Լուսաւորչի խանձւած քարերին նայեց, աչքերը յառեց գոռող միջնաբերդին և նրա դէմքը կծկւեց. խաղաղ աչքերում կայծեր ցոլացին, ձեռները սեղմելով՝ սպառնալից բռունցքներ կազմեցին և նա այլայլւած դէմքով դէպի մեզ դառնալով՝ սկսեց խօսել: Անխօս տղամարդը խօսում էր. անհուն վիշտն ու վրէժի ծարաւը բաց էր արել նրա լեզուն. Նա խօսում էր անպաճոյճ, հասարակ բառերով, որոնք սակայն ցոյց էին տալիս, թէ մենք ինչ գոհար ունինք ի դէմս Պետրոսի: Այդ առաջին և վերջին անգամն էր, որ նրան այլայլւած, նրա լեզուն բացւած էի տեսնում:

Ծո՜վ էր Պետրոսը. Նրա թողած տպաւորութիւնը մեծ է և դէպքերը միառմի արթնանում են նրան ճանաչողների յիշողութեան մէջ:

Տիգրիսի ափերին ենք. յոգնած, ջարդւած թափւել ենք բարձրաբերձ լերան ծայրին և դողում ենք կատաղի ցրտից. կրակ անելու հնարաւորութիւն չկայ, ապաստարան չկայ. պառկում ենք միմեանց գլխի, իրար տաքացնելու՝ չի լինում. բարձրանում է սոսկալի քամին և մենք ուշաթափ դրութեան մէջ ենք ընկնում: Առաւօտեան բաց ենք անում աչքերնիս... վա՜յ մեզ... քարացել ենք. մատնաչափ ձիւնը նստել է մեզ վրայ... անխուսափելի մահը կանգնած է դէմերնիս. լցւել է տանջանքի բաժակը և արտասուքի կաթիլներն ակամայից հոսում են մեր անզգայացած երեսներով... Միայն Պետրոսն է, որի դէմքը մազաչափ փոփոխութիւն չէր կրել, որի վրայ փայլում էր սովորական մեղմութիւնը: Երևի իր մտքում այն փիլիսոփայութիւնն էր անում, որ այդպէս էլ պէտք է լինէր. ինչ որ լինելու է՝ պէտք է լինի, ուստի և դըժգոհելու ոչ մի պատճառ չկայ:

Շարունակե՞լ... Ոչ, անկարելի է. կան գեղեցկութիւններ, որոնց անկարելի է թղթի վրայ դնել, այլ պէտք է զգալ միայն: Պետրոսը առատօրէն շնորհւած էր այդ գեղեցկութիւններով:

Անցան վեց երկա՜ր տարիներ, որոնց միջոցին Պետրոսը քայլեց անյողդողդ իր ընտրած ճանապարհով, մինչև որ արժանացաւ հերոսական մահին *)...

*) Ինչպէս յայտնի է, Սերեմճեան կախւեց 1901-ի դեկտեմբերին՝ Աղրիանուպօլսում:

ՌՈՒՄԱՆԻԱՅԻ ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՆ

Բերլինի դաշնագիրը նորից գրաւեց բոլորի ուշադրութիւնը իր վրայ և այն էլ մի երկրից, որտեղից այդ բոլորովին չէր սպասւում:

Ամերիկայի Միացեալ Նահանգների արտաքին գործերի մինիստր պ. Հէ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին ուղարկած է մի յայտագիր Ռումանիայի հրէաների վիճակի մասին: Յայտագրի մէջ մինստր Հէ յիշում է այն բոլոր ճնշումները, որոնց ենթակայ են հրէաները Ռումանիայում: Համարելով հրէաներին „օտարականներ“—չնայած որ Ռումանիայում նրանք ապրում են հարիւրաւոր տարիներ—Բուքարէշտի քաղաքագէտները հալածում են այս ազգը. Նրանց արգելւած է մտնել տէրութեան ծառայութեան մէջ, վարել ազատ պաշտօններ՝ փաստաբանական, դեղագործական և այլն: Հրէաները չեն կարող լինել հողի սեփականատէրեր, ծառայել մեծ թւով իբրև բանւորներ գիւղական կալւածքներում, և նոյնիսկ իրաւունք չունին մշտապէս ապրել գիւղերում: Դպրոց յաճախող հրէայ երեխաների թիւը սահմանափակւած է $5^{0}/_{0}$-ով և նրանք ենթակայ են յատուկ դպրոցական տուրքի, չնայած որ կրթութիւնը Ռումանիայում ձրի է...

Շնորհիւ „Հակահրէական միութեան“, որի անդամ են համարեա բոլոր յայտնի քաղաքական գործիչները, հրէաների դէմ գործածած բացառիկ կանոնները քանի գնում աւելի խստանում են և հրէաներին ուրիշ ելք չի մնացել, եթէ ոչ թողնել իրենց մայր երկիրը և գաղթել դէպի ազատ, Նոր աշխարհը:

Ռուսաստանից գաղթող հրէաների հետ միասին Ռումանիայի հրէաները ողողում են Նիւ-Եօրքի ու այլ մեծ քաղաքների բանւորական թաղերը, պարարտ հող են հանդիսանում այլևայլ վարակիչ հիւանդութիւնների համար, իջեցնում են ամերիկական բանւորի վարձի չափը, ինչպէս և նրա զարգացման, բարեկեցութեան աստիճանը:

Ահա այս վերջին պատճառաբանութիւնը պատրւակ բռնելով Ամերիկայի Հանրապետութիւնը անում է իր դիմումը. Նա մատնանիշ է անում Բերլինի դաշնագրի 44-րդ յօդւածի իմաստի վրայ, որով Ռումանիայի բոլոր բնակիչները վայելելու են հաւասար իրաւունքներ, առանց կրօնի խտրութեան և հրաւիրում է Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների ուշադրութիւնը Ռումանիայում տեղի ունեցող տխուր երևոյթի վրայ:

Չմասնակցելով Բերլինի դաշնագրի ստորագրութեան և չ'ունենալով իրաւունք զբաղւել այդ դաշնագրի 44-րդ յօդւածի իրագործումով, Միացեալ Նահանգները, սակայն, ոչ միայն յանուն օրինականութեան, այլ և մարդկայնութեան, բողոքում են այն ճնշումների դէմ, որոնց ենթակայ են հրէաները Ռումանիայում:

Միացեալ Նահանգների դիմումից յետոյ, նոյն իմաստով դիմում արած է մեծ պետութիւններին նաև Անգլիան, որը առաջարկում է նրանց միասին ձեռք առնել հարկ եղած միջոցները:

Եւրոպայի հակահրէական թերթերը հակառակ են Ամերիկայի միջամտութեան. Նրանց մի մասը դէմ է Ամերիկայի միջամտութեան եւրոպական գործերում առհասարակ, միւսը մատնանիշ է անում՝ թէ ինչու Ամերիկան

նոյն բանը չի անում Ռուսաստանի վերաբերմամբ, ուր հրէաները աւելի վատ պայմաններում են ապրում։

Շատերը կասկածում են, որ մեծ պետութիւնները կարող լինեն և այս դէպքում գործել „ներդաշնակ" կերպով։ Բոլորը, սակայն, ընդունում են Ամերիկայի կողմից արծարծուած հարցի կարևորութիւնը։

„Նա գոնէ օրինակ կը լինի, ասում է Evening Post, Ամերիկայի և Անգլիայի կողմից կատարուած մի նոր համաձայնութեան յօգուտ մի ճնշուած ազգի"։

„Օգտակար է յիշել, ասում է Temps, որ Նախագահ Ռուզվէլտ քանի երրորդ անգամն է ինչ յայտնում է իր խոր համակրանքը դէպի այն ճնշումները, որոնց ենթակայ են հրաները նոյնիսկ քաղաքակիրթ երկրներում"։

„Մենք, ֆրանսիացիներս, գրում է Ա. Լերուա Բոլիէ Européen լրագրում, Ռումանիայի հին բարեկամներից ենք. մենք ենք, որ ամենից շատ ենք նպաստել նրա միութեան ու անկախութեանը։ Երբ Բեռլինի կօնգրէսում հակառակ արդարութեան նրանից կտրեցին Բեսարաբիայի մի մասը Ռուսաստանին միացնելու համար, մենք պնդեցինք, որ դրա փոխարէն Ռումանիան ստանար իբրև հատուցում Դօբրուջան։ Աւելի ևս, ամէն անգամ երբ արևելքի մեզ ազգակից ճանաչուած այս լատինացիք նեղն են ընկնում իրենց ազգայնութեան պաշտպանութեան խնդրում, Ֆրանսիայում շատերս էինք, որ կանգնում էինք նրանց իրաւունքների պաշտպանութեան համար, չնայած որ դրանով վտանգւում էր մեր բարեկամութիւնը մի այլ աւելի ուժեղ ազգի, հունգարացիների հետ։ Բայց և այնպէս, ինչ չափ էլ մեծ լինեն մեր համակրութիւնները դէպի լատինական այս առաջապահները Դանուբի ափերում, մենք չենք կարող դրան զոհ բերել ոչ ճշմարտութեան և ոչ էլ արդարութեան շահերը։ Պէ՞տք է արդեօք և կարո՞ղ ենք նոյնիսկ մոռանալ, որ մեր ներկայացուցիչների նախաձեռնութեամբ է, որ Բեռլինի կօնգրէսը ընդունած է Ռումանիայի և Սերբիայի անկախութիւնը, անհրաժեշտ մի պայմանով, որ այդ երկրներում չլինեն կրօնական խտրութիւններ։ Կարո՞ղ ենք արդեօք մենք կեղծել խղճի դէմ և խոստովանել, որ Ռումանիան իսկապէս իրագործել է Բեռլինի կօնգրէսի որոշման այդ կէտը"...

Գերմանական *Gazette de Voss* և *Koelnisch Volzszeitung* ենթադրում են որ Ամերիկայի դիմումը կունենայ աւելի բարոյական նշանակութիւն և կըստիպէ իրեն Ռումանիային հէնց իր շահերի տեսակէտից բարելաւել հրէաների վիճակը...

Ամերիկական դիմումին Ռումանիան պատասխանել է առայժմ նրանով, որ արգելել է հրէաներին անցագիր տալ Ամերիկա գաղթելու համար։

Ամերիկայի միջամտութեան օրինական կէտը՝ աղքատ հրէաների գաղթելը՝ վերացւում է սրանով. բայց էական մասը՝ հրէաների անարդարացի ճնշւիլը՝ աւելի է խըստանում այդ կարգադրութեամբ։

Կասկածելի է, սակայն, որ Ամերիկան հեշտութեամբ յետ կանգնի իր մի անգամ յայտնած իրաւացի և արդար պահանջից։

Ինչպէս իր ազատութեան առաջին օրերից, նոյնպէս և վերջին տարիների ընթացքում Միացեալ Նահանգները ցոյց են տալիս չտեսնուած յառաջադիմութիւն կեանքի բոլոր ասպարէզներում։ XIX դարի ընթացքում ազգաբնակութիւնը այստեղ 4 միլիօնից բարձրացել է մինչև 78 միլիօն և ամէն մի նոր տարին տալիս է նրան առաւելութիւն միւս պետութիւնների դիմաց։

Միացեալ Նահանգների արդիւնաբերութիւնը ու վաճառականութիւնը առաջ են գնում՝ ոչ մի երկրում չտեսնուած քայլերով. ամերիկական մեծ ընկերութիւնների (տրեստների) առաջ խոնարհւում է նոյնիսկ Անգլիան։ Նիւ-Եօրքը դառնում է համաշխարհային ֆինանսական կենտրոն և յաճախ Եւրօպայի պետութիւնները ստիպուած են դիմել „եանկի" ֆինանսիստների օգնութեան։

Ամերիկան չգիտէ ինչ է դեֆիցիտը, ընդհակառակը, ամէն տարի տէրութեան եկամուտը աւելանում է ծախսից, որ հնարաւորութիւն է տալիս նրան, առանց դժուարութեան իրականացնել խոշոր ձեռնարկներ։

„Մեծ լողորդին հարկաւոր է և մեծ ծով"—գոչում էր աշխարհակալ քաղաքականութեան պաշտպանների պարագլուխը Վաշինգտոնի սենատում. Կուբայի պատերազմից առաջ և մեծ հանրապետութեան ներկայացուցիչները որոշեցին հետևել նոր ուղղութեան՝ լայնացնել իրենց շուկան, դեր խաղալ միջազգային քաղաքականութեան մէջ։

Մի քանի տարի հազիւ է անցել այն օրւանից, երբ Ամերիկայի Միացեալ Նահանգները որոշեցին առաջ մղել այդ մեծ քաղաքականութիւնը և այդ մի քանի տարւայ ընթացքում նրանք արել են հսկայական քայլեր՝ Կուբայի ազատութիւնը, Ֆիլիպպինեան կղզիների գրաւումը, Պանամայի ջրանցքի խնդրի լուծումը յօգուտ Ամերիկայի և վերջապէս Չինաստանի անկախութեան պաշտպանութիւնը և նրա շուկայի բանալը բոլորի առաջ։

Դրանք բոլորը այնպիսի քայլեր են, որ ուրիշ պետութիւններ չեն արել նոյնիսկ տասնեակ տարիների ընթացքում։

Իր ձայնը բարձր հնչեցնելու և լսել տալու համար 5 տարւայ ընթացքում Ամերիկան մշտական զօրքի թիւը 100 հազարից բարձրացրել է 300 հազարի. աւելի մեծ չափով աւելացրել և զարգացրել է նա իր նաւատորմը։

Բարեբախտաբար, Արևմուտքի մեծ Դեմօկրատիան չի ուզում բաւականանալ միայն իր նիւթական շահերի պաշտպանութեամբ

Առաջին անգամն է, որ հին աշխարհի բոլոր ազգութիւնների և դաւանանքների հալածուածներից կազմուած Մեծ Դաշնակցութիւնը բարձրացնում է իր ձայնը յօգուտ Արևելքում տառապող մի ազգի։

Պիտի յուսալ, որ Թարմ, հզօր, օրէցօր աճող Ամերիկական մեծ Դաշնակցութիւնը իր՝ յանուն մարդկայնութեան արած միջամտութիւնները առաջ կը տանի նոյն հաստատակամութեամբ, որը նա մինչև ցարդ ցոյց է տուել բոլոր արտաքին հարցերի նկատմամբ։

Հաւանական է կարծել, որ Ամերիկայի այս միջամտութիւնը չի սահմանափակւի միայն հրէաների հարցով, այլ սկիզբը կը հանդիսանայ մի նոր և մեծ ազատարար ուղղութեան ի նպաստ ճնշուած ազգութիւնների։

Բնական է կարծել, որ իր վաճառականական շահերի տարածման հետ միասին բոլոր երկրներում, Նոր Աշխարհի հզօր պետութիւնը նոյն կորովով կը տարածէ և իր քաղաքական ու հասարակական կարգերի սկզբունքները՝ ազատութիւն, հաւասարութիւն և օրինականութիւն ամէն տեղ և բոլորի համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒԶՈՒՄՆԵՐ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Լուրերը ծանր են Մակեդոնիայից, այնքան ծանր, որ կարծէք ընդհանուր բռնկման նախընթաց օրն է... գըրգըռումը քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ հասել է, կարծէք, իր գագաթնակէտին: Ապստամբական բազմաթիւ խմբեր երևան են եկել երկրի հիւսիսային ու հարաւային կողմերում և ժողովրդին դէպի զէնք են կոչում: Շարժման ղեկավարներն են՝ բուն մակեդոնացի գործիչ Դելչեվ և բօլգարական գնդապետ Եանկօվ, ի ծնէ մակեդոնացի, փայլուն ճարտասան և արտակարգ կորովի տէր մի մարդ: Իր բազմաթիւ մարտիկ ընկերներով ամիսների ընթացքում նա արշաւանքներ է գործում Ռօդօպօ լեռների և Ռիլօ Դաղի հարաւային լանջերի վրայ և քանի՜ քանի անգամ արդէն արիւնոտ ընդհարումներ է ունեցել Թիւրքաց զօրքի հետ: Ազգաբնակութիւնը պատսպարում ու աջակցում է նրան, իսկ ուր նա մերժում է այդ աջակցութիւնը, Եանկօվը այնտեղ դիմում է սպառնալիքի և ձեռք բերում իր կամեցածը:

Դժբախտաբար, ապստամբութեան չեն մասնակցում մակեդոնական յեղափոխական բոլոր կազմակերպութիւնները. բացի այդ, Սերբիան և Յունաստանը շարունակում են թշնամաբար վերաբերուել ցեղակից ազգի ազատագրական շարժման:

Մակեդոնիայի խռովութիւնները լուրջ բնոյթ ունին այս անգամ և ամէն տեղ զբաղեցնում են մամուլը: Յեղափոխականները այս անգամ թերևս աւելի մեծ յոյս ունին եւրօպական միջամտութիւն առաջ բերելու:

Սակայն Բերլինի դաշնագիրը ստորագրողներից ոչ մէկը առայժմ ձայն ծպտուն չէ հանում:

Դժբախտ երկիրը մի անգամ ևս կը յանձնէ իր սև ճակատագրին: Ստւարացած և կենտրոնացած տաճիկ զօրքերը հրդեհի ու կողոպուտի կը մատնեն անպաշտպան գիւղերը, մակեդոնական ֆէդայիների „չէթաները" կրկին կ'ընկճուին անհաւասար, թէև հերոսական պայքարի մէջ: Դարձեալ կը հնչէ կարմիր տէռօրի փողը Մակեդոնիայի ամբողջ տարածութեան վրայ. „աւազակները" խումբ-խումբ կը բռնուեն, կերթան դէպի աքսոր կամ դէպի կախաղան և ձմրան սառնամանիքներին գերեզմանային լռութիւնը կը թագաւորէ այդ բազմատանջ երկրում... Փո՞յթ չէ. Նրանք գիտեն — ազատութեան առաջամարտիկները—որ մեծ գործը մեծ զոհողութիւն է պահանջում, գիտեն, որ դեռ շատ անգամ և աւելի ծանր հարուածներ պիտի կրեն, բայց և գիտեն նրանք, որ ուրիշ ճամբայ չկայ, որ սրով ու կրակով է միայն, որ պիտի աջողին վաղ թէ ուշ խորտակել statu quo-ի անարգ դաւանանքը և ձեռք բերել ազատ մարդու, ազատ քաղաքացու իրենց իրաւունքները:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԸ

Դրութիւնը ծանր է Ալբանիայում և Հին-Սերբիայում: Մի կողմից մահմէտական ալբանները շարունակում են իրենց վայրագութիւնները: Նրանք անդադար ներս են արշաւում այդ քրիստոնեայ նահանգը և ամէն անգամ կոտորած ու աւերումներ են թողնում իրենց ետևից: Եւրօպական Թիւրքիայի քրդերն են արնաուտները: Սուլթանի կառավարութիւնը այդ արիւնռուշտ վայրենիներին ևս սիրաշահում ու քաջալերում է. ալբանացի աւազակապետները փոխանակ պատժուելու իրենց ոճրագործութիւնների համար՝ կանչւում են Եըլդըզ և բարձր պաշտօնների են արժանանում:

Միւս կողմից ազգային ինքնաճանաչութիւնը օրէցօր զարգանում է ալբանացիների մէջ: Նրանց ցեղապետները և ղեկավարները հակառակում են դրսի միջամտութիւններին: Դրանցից ամենաուժեղը, Բօլիտենացը իր հազարաւոր համակրողների հետ բանակ է դրել Մետրօվիցայի մօտ և արգելում է ռուսաց հիւպատոսի այնտեղ հաստատուելուն, մի բան, որ ալբանացիների կարծիքով նպատակ ունի քաջալերելու սերբերի պրօպագանդը Հին Սերբիայում: Միացած Դիակօվայի, Իպէկի և Նօվի Բազարի (Հին-Սերբիա) իրենց ցեղակիցների հետ և հաւանականաբար խրախուսուած սուլթանի կառավարութիւնից, Իտալիայից և Աւստրիայից, նրանք վճռել են զէնքի ուժով ընդդիմանալ ռուս հիւպատոսի հաստատուելուն...

Սերբիայի ամբողջ լրագրութիւնը աղաղակում է արնաուտների գազանութիւնների դէմ: Ալբանացիները իրենց կողմից բողոքում են օտարների միջամտութեան դէմ իրենց ներքին գործերում:

Բերլինի դաշնագիրը ստորագրողները այս դէպքում ևս լուռ ու մունջ են մնում: Statu quo-ն ամէնից առաջ... Մարդասիրութիւնը գեղեցիկ խօսք է, բայց „ռէալական քաղաքականութիւնը" ևս իր իրաւունքներն ունի, — ասում է Աւստրիական մի թերթ... Աւստրիան և Ռուսաստանը երդուել են կանգուն պահել իրերի վիճակը Բալկաններում—ինչ որ էլ լինի:

Սակայն անցքերի տրամաբանութիւնը աւելի ուժեղ է, քան ամենահզօր զինակցութիւնները: Ինչպէս որ Յունաստանը ի տես Կրէտէի անվերջ նահատակութեան համբերութիւնը հատած իվերջոյ ձայնակցեց իր մորթւող եղբայրների յուսահատ հաւարին, այնպէս էլ մի գեղեցիկ օր Սերբիան գրոհ պիտի տայ իր ցեղակիցներին տանջող կառավարութեան դէմ և իր հովանաւորութեան տակ պիտի առնէ ստրկացած Հին-Սերբիան:

ԲՕԼԳԱՐԻԱՅԻ ԱԶԱՏՄԱՆ 25-ԱՄԵԱԿԸ

Տօն է Շիպկայում. բօլգար ազգի ներկայացուցիչները ցարի յատուկ պատգամաւորների հետ հանդիսաւոր բաժակաճառերով յիշատակում են պատմական այն օրը, երբ ռուս ու բուլգար մարտիկները մղեցին տաճկի դէմ հերոսական և վճռական ճակատամարտը:

Բօլգարիայի ազատութեան 25-ամեակն է տօնւում...

Մի ամբողջ սերունդ է աշխարհ եկել այն յիշատակելի օրերից իվեր և այն պանծալի, կռւող սերնդից սակաւաթիւ ներկայացուցիչներ միայն մնում են կենդանի և մասնակից են այսօր տօնախմբութիւններին: Հոսում է շամպայնը և խանդավառ ներբողներ են արտասանւում ընկած հերոսների հասցէին: Ցնծում է Բօլգար աշխարհը և երախտագիտութեան զգացումով լի օրհնում է ազատարար կայսրի, Ալէքսանդր II-ի անջնջելի յիշատակը:

Ռուսաստանի մասնակցութիւնը ազատութեան այդ տօներին... կարծես ակամայ է, բռնազբօսիկ...

Այլ բան էր երազում ցարի կառավարութիւնը,— այլ բան կատարեց: Նա երազում էր իր «հովանաւորութեան» ենթարկուած՝ կիսանկախ մի Բուլգարիա, բայց վերջինս ազատուելուց յետոյ՝ շատ շուտ թօթափեց այդ ատելի խնամակալութիւնը: Եղան մինչև իսկ վայրկեաններ, երբ Ստամբուլովի օրերում ռուսական արիւնով վերածնուած բուլղարը «ապերախտաբար» երես էր դարձնում իր ազատողից և նոյնիսկ անհաշտ կռիւ էր յայտարարում նրան:

Բռնազբօսիկ է ցարի կառավարութեան մասնակցութիւնը և այն պատճառով, որ Ռուսաստանում վաղուց արդէն չոգիացել են ազատական այն աւանդութիւնները, որոնք Ալէքսանդր II-ի թագաւորութեան պարծանքն են կազմում և որոնց պարտ է կիսալուսնի շղթայից ազատուած համայն սլավօնականութիւնը:

Կայ և ուրիշ հանգամանք: Դա «խաղաղութեան» և միջազգային փափկանկատութեան մտահոգութիւնն է: Ռուսաստանը ամէն միջոց ձեռք է առնում, որ Շիպկայի տօներին մասնակցելով՝ չքաջալերէ մակեդօնական յեղափոխականներին, կամ չվիրաւորէ սուլթանի վեհապետական զգացումները: Այդ նկատումով է որ ցարի ներկայացուցիչ՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ տօնախմբութիւններից անմիջապէս յետոյ ուղևորւում է Պոլիս: Աբդիւլ Համիդի ձեռքը սեղմելու:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Ինչպէս յայտնի է, ֆրանսիական պարլամենտի պահպանողական կուսակցութեանը պատկանող երկու ծանօթ անձնաւորութիւններ՝ Դընի Կօշէն և Կոմս դը Մէօն հրաժարուեցին Բրիւսէլի համաժողովին մասնակցելուց՝ յայտարարելով, որ թէև միանգամայն համակրող են հայկական դատի, բայց չեն կարող խորհրդակցութեան մէջ մտնել այնպիսի ֆրանսիացիների հետ (Ժօռէս, Պրէսանսէ ևայլն), որոնք իրենց հայրենիքի մէջ քաջալերում են Կոմբի ճնշող ու հալածող քաղաքականութիւնը:

Պիէռ Կիառ հրատարակեց Européen թերթի մէջ իր պատասխանը երկու պահպանողական չէֆերին, ցոյց տուեց նրանց պատճառաբանութեան բոլոր անհեթեթութիւնը, յիշեցրեց, որ Դրէյֆուսի դատի միջոցին Պրէսանսէ, Ժօռէս և [illegible]իչները շարունակ ցեխոտւում, ամբաստանւում էին պահպանողականների կողմից, այնուամենայնիւ այդ հանգամանքը չէր արգելում նոյն Պրէսանսէին՝ հայկական խնդրի առթիւ դիմել ամէն անգամ Դընի Կօշէնին ու իր ընկերներին, համերաշխ դիմումներ անել արտաքին գործերի մինիստրին ևայլն:

Այժմ ուրախութեամբ արձանագրում ենք մի ուրիշ ֆրանսիացի պահպանողականի, նշանաւոր Անատօլ Լը Ռուա Բօլիօյի հայեացքները՝ Բրիւսէլի կօնգրէսի մասին՝ որոնք արտայայտուած են մի ընդարձակ նամակով, նոյն Européen-ի մէջ:

Ահա այդ նամակը.

Պարոն Տնօրէն,

Թէրևս շատ ուշ է արդէն խօսել այժմ Բրիւսէլի հայասէր Կօնգրէսի մասին, որի արձանագրութիւնը Européen-ի էջերում խիստ հետաքրքրից և խորապէս յուզեց: Ես շատ ցաւեցի, որ անկարող եղայ մասնակցել և ձեր պաշտպանած ազնիւ դատին բերել նաև իմ հին համակրութեան համեստ տուրքը: Իմ ցաւը աւելի ևս սաստկացաւ, երբ ձեր և «Պրօ Արմէնիա»-ի հրատարակած նամակներից իմացայ, որ մեր մի քանի հայրենակիցների բացակայութիւնը պայմանաւորուել է, գլխաւորապէս, քաղաքական ու կրօնական այն տարաձայնութիւններով, որ նրանք ունին Կօնգրէսի նախաձեռնողների հետ: Իրողութիւնը թւում է ինձ չափազանց վշտալի՝ Ֆրանսիայի համար աւելի, քան մեր բարեկամ հայերի համար:

Ես ևս—թաքցնելու կարիք չունիմ—լուրջ ու մտածուած տարաձայնութեան մէջ եմ այն ականաւոր մարդկանց հետ, որոնց պատկանում է Բրիւսէլի Կօնգրէսի նախաձեռնութիւնը, ինչպէս և նրանց հետ, որոնք վարում են «Պրօ Արմէնիան»... Բայց դա չի կարող արգելել ինձ՝ յարգել քաղաքական հակառակորդներին, որոնք ներսում կամ դրսում պաշտպանում են իրաւունքի և ազատութեան դատը: Ընդհակառակը ինչ վերաբերում է ինձ, ես կարծում եմ, որ այդպիսի դիպուածներից պէտք է օգտուել փութկոտութեամբ և որ քանի մեծ ու արմատական լինեն մեր կրօնական, քաղաքական ու նոյնիսկ սօցիալական տարաձայնութիւնները, այնքան մենք աւելի պիտի ուրախանանք, երբ տեսնում ենք մեր առջև ընդհանուր մի հող, ուր կարող ենք բոլորս գործել միասին՝ յօգուտ արդարութեան և ազատութեան.

Այդպիսի ընդհանուր գործողութիւնից շահ կայ թէ Ֆրանսիայի համար, թէ ռամկավարութեան ու մարդկայնութեան համար... Եւ եթէ այդ տեսակ մի գործողութիւն, աւա՛ղ, շատ դժուար է ներսում, նա պիտի դիւրին լինի, երբ պէտք է պաշտպանել մարդկայնութեան շահերը դրսում՝ հանդէպ այնքան արդար մի դատի, որպիսին է հայերի կամ մակեդօնացիների դատը:

Այդպիսի դիպուածում մեր բոլորիս պարտքն է միացնել մեր ջանքերը՝ պաշտպանելու հարստահարուածներին, որոնք դաշնագրերով դրուած են մեր հովանաւորութեան տակ:

Պէտք է անդադար կրկնել Պիէռ Կիառի և Բրիւսէլի կօնգրէսի գրչիչների հետ, որ Ֆրանսիան ու Եւրոպան Բեռլինի վեհաժողովում ստանձնել են հանդիսաւոր կերպով ստիպողական պարտաւորութիւններ հայերի և մակեդօնացիների վերաբերմամբ... Մեր լիազօր ներկայացուցիչների բերանով 1878-ին Բեռլինում մենք երաշխաւոր ենք կանգնել հայերի և մակեդօնացիների ապահովութեան համար... Եւրոպան իրաւունք չունի հրաժարուել իր պարտաւորութիւններից նախ քան նրանց իկատար ածելը:

Սոսկ մարդասիրական պարտաւորութիւն չէ դա, որ մենք ունենք երկրագնդի ուրիշ հարստահարուածների նկատմամբ, այլ, եթէ կարող եմ այսպէս ասել, դա մի տեսակ իրաւաբանական պարտաւորութիւն է, քանի որ եւրոպական պետութիւնները գիտակցաբար և ամենահանդիսաւոր ձևերով ստանձնել են այն...

Մենք էլ իրաւունք չունենք ձանձրանալ կամ վհատել: Պիտի անդադրում աշխատենք արթնցնելու անտարբերների եռանդը, կամ լաւ է ասել, նրանց քնած խիղճը: Եւ դա մի գործ է, որ միանգամայն համաձայն է Ֆրանսիայի հանճարի և պատմական աւանդութեան հետ, այնպէս որ բոլոր ֆրանսիացիք միացած կարող են աշխատել նրա համար—թէ նրանք, որոնք կապուած են անցեալի մեծ Քրիստոնէական աւանդութեան հետ և թէ նրանք, որոնք իրենց համար պատիւ են համարում ներշնչուել Յեղափոխութեան ոգով:

Ֆրանսիան՝ արևելքի այդ հարստահարուածների դիմաց կարող է այդպիսով վերստին գտնել իր բարոյական միութիւնը մի վեհանձն գաղափարակցութեան մէջ ի նպաստ Եըլտըզի բռնակալութեան զոհերի: Ըստ իս, դա մի աւելորդ պատճառ է՝ որ բոլոր եւրոպացիք առանց խտրութեան կրօնի ու կուսակցութեան՝ ձեռնարկել միասին այդ պրօպագանդի՝ ինպաստ մի դատի, որը կարող է ոգևորել ամենքիս հաւասար եռանդով: Իսկ մենք միայն շնորհակալ պիտի լինենք այդ հալածական ժողովուրդներից, որոնք մեր ներքին հակառակութիւնների միջոցին հնարաւորութիւն են տալիս մեզ՝ իրարու մերձենալու՝ յանուն մի գործի, որ ամենամեծն է և ամենասուրբը...

ԼՈՒՐԵՐ

—

Պարսկա-տաճկական սահմանագլխից մեզ գրում են. Տաճիկ կառավարութիւնը բացէ իբաց մերժել է թոյլ տալ գաղթականներին անցնել տաճկաց սահմանը։

—

Բագրևանդ գաւառի Խաստուր գիւղացի Խաչատուր վարժապետ Տէր-Աստուածատուրեան և Բուլանըխ գաւառի Կոպ գիւղացի Աւետիս Տէր-Մարգսեան սուլթանի հրամանով կախուած են Բայազէտի մէջ սեպտեմբերի 23-ին։ Այս երկու նահատակները բանտարկուած էին Խաստուրի կուի պատճառով՝ Խաչատուր վարժապետը իբրև պատսպարող խմբի տղաներին, իսկ Աւետիսը իբրև կուող հայդուկ։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

ԱՄԵՐԻԿԱՅԻՑ օր Ն.-ի միջոցաւ 56 ֆրանք, ՓԻԶԲՈՒՐԳԻՑ Մ. իշխ. (գրքերի հաշիւ) 26 ֆր., ԼՕՆԴՕՆԻՑ Բօնտերից 61 ֆր., ԲԵՐԼԻՆԻ „Մօնէկլիւլ“-ից 25 ֆր., ՎԻԵՆՆԱՅԻ „Անդրանիկ“ խմբից՝ Ոմն 10 ֆր., Եթովպացի 25 ֆր., Առիւծ յաղթողի ծառան 20 ֆրանք։ Գումար 218 ֆրանք։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՈՅ Կոմիտէն՝

Արշաւիր 5 դահեկան, Կարօ 12, Շանթ 20, Ճնտօ 20, Սաֆօ 20, Արծիւ 10, Շմաւոն 15, վիճակ. ապարիկ 2 տոմս զանձ. 10, Ս. 200, Ոմն 20, Ճակատագործեան 20, Վ. Ազիզ 40, Զինանշան 5, Սարսափ 5, Մնդու 100, Նշիկ Երեց 10, Ժամագործ Մարկոս 10, Շմաւոն կրկին 100, Յ. Գարակէօզեան 5, Շիրխօր 100, Քար 10, Ծաղիկ 50, Ծ. Մ. 20, Հ. Տ. 10, Մ. Մարկոսեան 5, Էլէկտրիկ 10, Ռ. Ստեփանեան 10, Յ. Մ. Մ. 40, Յ. Կուտ. 10, Ա. Գ. 10, Վահրամ Ապահունի 50, Ս. Ճ. 50, Ոմն մի հոսհոսէն 10, Ոմն 195, Թիւ 16 97. 50, Ս. Ա. 10, Թ. Թ. 40, Մ. Ն. 40, Մանուկ 100, Տանալիա 20, Գնթունի 40, Կրակ 40, Մօսինի հրացան 500, Ա. Գ. 20, Մաքինա 20, Գաբրիէլ 25, Մի ոմն-Երկուանձ 5, Ազատիկ 50, Խոնարհ քահանայ մը 40, Օրինասէր 97. 50, Խենթ 10, Ո. Պօղոսեան 5, Անձնուէր վարդապետ 25, Երիցուկ 25, Հայկանուշ 77, X. 40, Գ. Գումուճեան 100, Միհրդատ 10, Սարաֆ 10, Հօտլեան 10, Ոմն տիկին 40, Ոմն 10, Ոմն 80, Ոմն 10, Ն. Մ. 40, Ս. Ն. 30, Սուրճ 5, Թօրոս Աղբար 97. 50, Յակոբ Յակոբեան 10, Ապտալ 20, Ոմն 97. 50, Վասպուրական 10, Անանուն 20, Ոմն 20, Ոմն 10, Ոմն 5, Տամատի ձեռամբ Ոմն 97. 50, Հայ 5, Գրիշ 5, Դանակ 5, Մուրճ 10, Կիտէն Կէլէն 10, Դօշան 2, Զմեւր 5, Աշիրէթ 5, Թնդանօթ 5, Ն. Խանձեան 20, Ոչխար 97. 50, Կիլիկեցի ոմն 30, Հայկ Ե. 40, Երւանդ Ծաղիկեան 20, Մուշեղ Տէր Ղեւոնդեան 5, Ոմն 5, Ոմն 10, Սահակ Քէմաճեան 30, Ռես 10, Յ. Համբարձումեան 10, Շաքար Գէորգ 10, Ոմն 80, ԳԷՀԻՐԷՆ՝ օր. Վեհանուշ 30, Կայծակ Օհաննէս 60, Պարոյր 20, Վահունի 20, Ծնունդ 20, Ոմն 20, Յ. Փափազօֆ 50, Գ. Ա. 30, Ճկըլիկ 10, Ա. Խաչատուրեան 20, Կոմիկ 30, Ս. Նշան 15, Վարպետ 48. 75, Ա. Գ. 10, Արծաթ 30, Գ. Հապէշ 10, Խասգեղցի 20, Լուցկի 15, Լոյս 20, Կրակոտ 25, Մ. Իշլէմէճեան 10, Խ. Ե. 20, Յովհաննէս 10, Վեհ Միհրշապուհ 10, Միքայէլ Կ. Վարդանեան 97. 50, Յակոբ Բէհրիգեան 77, Գէորգ Նազրեան 20, Պէյն Սուրէնի Էվէրէկցի կօշկակար ազգայիններէ 104, ՄԻՆԻԷԷՆ՝ Վահէ Մօսին 49, Երկրագործ 97. 50, Կիրկիս 20, Մ. Միրիճանեան 97. 50, Սէլիմ Խանճեան 30, Ծխավաճառ 20, Հայկունի 10, Աստղիկ 20, Արմենակ հրացանակիր 20։

Համագումար 4902 դահեկան ողջ եգիպտ. եւ 10 փարա։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ՝

ԴԵՏԱՓԻ Կոմիտէն՝ մի խնջոյքից, յուլիս 1902.— Սուրէն 30 ղր., Ա. Պ. 10, Հրացան 50, Նորաշէն 50, Զարդանաշէն 100, Ք. Ի. Զ. 50, Մի ոմն 4, Տ. Պ., Վէրք, X. Ս. Մարտ, V., Շ., Լ. Մ., տիկին Վ. Թ. Յ., տիկին Թ. Ա. 10-նական, Ասլան, Ռստայն, Մուրճ, Գազիկ, Ա. Ղ. Ա., Գ. Պ., 20-ական, օրիորդներ՝ Ե., Վ., Հ., Ի.-եանց, Ե. մէկ-ական, օր. Ե. 2, տիկին Մ. Մ. 5, օր. Ծ. Ս. 5, Ա. Պ. 11, տիկին Պ. 23, Յ. Բաղտ 2։ Գումար 537 ղրան։

ՌՈՒՄԱՆԻԱ՝

ԴԱՆՈՒԲ Ենթակոմիտէն՝ յուլիս-օգոստ.-ին հանգանակուած.

ՍՈՒԼԻՆԱՅԻ „Զինասէր“ խ. 83 ֆրանք, „Սերոբ-Աղբիւր“ խ. 63, „Նոր-Դար“ խ. 40, „Սեհպուհ“ խ. 33, „Տարօն“ խ. 20, „Վարազ“ խ. 56, „Կարին“ 41, Հազուլ“ խ. 60, „Փէդայի“ խ. 50, Պարոյր 5, Վարօդ 5, ՕՏ.-ի „Խնդրակատար“ խ. 39 (15 ռուբլի), Սուլինայի բարեկամներէ նուէր՝ Բարեկամ 10, երկու Նուիրատումէ 10, Մ. Մուրատեան 5, Թաթոս 3, Հ. Յովհաննէսեան 5, Ս. Յաթիթլեան 8, Ղազար 5, Գ. Մանուկեան 5, Պղ. Աւետիսեան 3։ Գումար 549 ֆրանք։

ՄՐԳԱՍՏԱՆԻ Կեդր. Կոմիտէն՝

1901 թ. սեպտեմբերից մինչեւ 1902 թ. սեպտեմբեր՝ Մնացորդ նախորդ տարուանից 32. 22 ռուբլի, Օրիորդներից 90. 50, Ինտէլիգէնտներից 40, Վաճառականներից Ա. 20, Վաճառականներից Բ. 119. 50, Գործակատարներից Ա. 40, Գործակատարներից Բ. 54. 50, Արհեստաւորներից 145. 21, վարժապետներից 8. 40, Սովորողներից Գ. 40, Սովորողներից Ս. 15, Եղբերից 259. 20, Մօսկվայից 100, Վիճակախաղից Տ. 20 Քաղաքնմասից 8, Շամիլից 20, Գրքերի վաճառումից 14. 30, Տէրտէրից 5, Քեռուց 15, Նոյատապանից 15, Արպծանիից 276, Արփաչայից 87, Բարդողից 146. 50, Ալիղամ 28, Հախվէր 12, Աղասիից 15։ Գումար 1626 ռ. 33 կոպէկ։

Լ. Պ. Կեդր. Կոմիտէն՝

ՌՍԿԵՀԱՆՔԻ Կեդր. Կոմիտէն.

Արշակաւանէն 354. 75 դահեկան, Սամուէլ 24. 75, Կրակ 33, Թաթուլ եւ Աղբիւր խմբերի հետեւեալ անդամներէն 412. 50, Աղբիւր եւ Թաթուլ 4 ամսական 99, Արաքօ 3 ամս. 49. 50, Սուգօ 3 ամս. 24. 75, Կրզօ 3 ամս. 49. 50, Դազիկ 2 ամս. 16. 50, Կաջբապետ 2 ամս. 16. 50, Պօնտօն 2 ամս. 16. 50, Վարսակ 4 ամս. 33, Աշոտ 4 ամս. 33, Կօլօ 4 ամս. 33, Երկաթ 2 ամս. 16. 50, Բարսեղ 3 ամս. 24. 75, ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ Աղբիւր եւ Թաթուլ խմբերէ 1320 դահ.։ Գումար 2145 դահեկան։

ՆԱԽԱՅԱՆԳՍՏԻ Կեդր. Կոմիտէն՝

№ 1 300 ռուբլի, „Զիարէթ“ խ. 3. 60, „Դերձակ“ խմբի ԶՈՐԱՓՈՐԻ ճիւղերից՝ „Ախոյեան“ խմբից՝ Մ. Սերոբ 1. 50, Աշոտ 1. 50, Մ. Մաշայ 0. 90, Դ. Գերի 1. 25, Միքայ. 1. 50, Անդրանիկ, Աղբիւր, Քաջ Նիկօ 1. 5, Պ. Հայրենասէր 0. 30, Սերոբի միջոցով հանգանակուած՝ Թշնամուց 1. 40, Խ.-ի միջոցով 1. 30, Ոմն 0. 25, „Արուսեակ“ խ. ամսավճարներ 15. 5, խմբի հանգանակած 4. 90, Թշնամուց կաշառք 0. 55, ՆՈՐ քաղաքի „Անաքեկիչ“ խմբից՝ Արապօ 1, Համօ 1, Բարի Պտուղ 1, Շարա 1, Աշոտ, Ծերուկ, Ռշտունի, Վազիր 50-ական կ., Առէսի „Առիւծ“ խ. 50 ռ., „Կարէզ“ խ. 12 ռ., Զորափորի „Թորգոմ“ խ. 5 ռ., „Արուսեակ խմբի օգրապակետի ուխտաւորներից 7 ռ., Կարօյի ձեռքով „Իշխանակ“ խ. 40 ռ., „Աղբիւրաւոր“ խ. 25, „Սիփան“ խ. 25, „Սօլխան“ խ. 30, ՕՏ-ի „Կայծակ“ խ. 20, „Մայեօր“ խ. 2, „Տըժիկ“ խ. 10, „Նոր“ խ. 20, „Մօտկան“ խ. 10, Զուլումաթի ձեռքով „Ներբովտ“ խ. 30, ԳԱՂԹԱՎԱՅՐԻ „Դզիպտացի“ խմբի 1092 թուի առաջին քառամսի անդամավճարներից եւ նուէրներից 10. 70 ռ.։ Գումար 664 ռուբլի 75 կոպէկ։

ՎԻՇԱՊԻ Կեդր. Կոմիտէն՝

№		№	
2691	Արաքս Երգախ 100 լէվ,	10570	Կէսառ 1[illegible]
2692	Մենակից 100 լէվ,	10571	Գր. Դաւիթեան 5 լէվ,
2693	Հ. Կ. Հ. Ս.-ից Մենակի ձեռքով 100 լէվ,	10572	Կ. Ս. 5 լէվ,
		10573	Խաչիկ 50 լէվ,
2694	Իսրար 20 ֆրանք,	10574	Սիսէ 10 լէվ,
3695	Մարթին Ք. ի միջոցով 300 լէվ,	10576	Դեղինից 20 ֆրանք,
		10576	Սեղան 40 ֆրանք,
2696	Բ.-ից 20 լէվ,	10577	Ոմն 10 լէվ,
2697	Խազի 50 լէվ,	10578	Իսահակ 15 լէվ,
2698	Խանութ 20 լէվ,	10579	Կիլիկիացի 80 լէվ,
2698	Ա.-էն 100 ֆրանք,	10580	Կիլիկիացի Հեթում 20 լ,
2700	Կար. Իպով 5 լէվ,	10581	Արազած 10 լէվ։

Հայրենիք 10 դահեկան, եւս 10, Մօսին 2. 50, Գանեա 5, եւս 5, Նէմէսիա 2. 50, Հիտրա 35, Կամք 85, Թաթուլ Գայլ 54։ Գումար 910 լէվ, 180 ֆրանք, 209 դահեկան։

Խմբագրութեանս գիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)